


ՎԱՉԱԳԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԿԱՐՈՒՄԱՆԻՐ



ՎԱԶԱԳԱՆ
ՎԱՐԴԱՆՅԱՆ



Կարոտնուր

Դր ակտի Եւրապի
այնպիսի Բաժանի Բնիկա Տարածակ,
որի Կարողակցման Կարգի
Գործիչ Տրի և արժանի
Գերանի Կարգի.

Ի Բնիկա 24-ակտ և արժ
Կ. Կարգի 11/12 87

ՄԱՅՄԱՅՄ
ՄԱՅՄԱՅՄ

Վարդանյան Վ.

Վ 301 Կարոտներ: Բանաստեղծություններ, սոնետներ, պոեմներ (Վաչագան Վարդանյան) Եր.: Սովետ գրք: 1987.— 116 էջ:

Հեղինակի բոլոր ստեղծագործություններում տողից տող թրթռում է լուսեղեն կարոտը: Ջերմանում է կարոտը հայրենի եզերքով, խաղաղ լուսաբացներով, սիրո նվիրական աշխարհով: Իսկ հողագունդը հավերժորեն խաղաղ տեսները բանաստեղծի գերագույն կարոտն է:

4702080200 (184)

Վ. _____ 87 «S»

ԳՄԴ 84 Հ 7

705 (01) 87



ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Քայլում՝ ցնծում եմ, կանգնում՝ ցնծում եմ,
Ի՞նչ է պատահել այսօր ինձ հետ.
Վերում արտույտն է, իսկ ես ցածում եմ,
Նա թռի-վռի, ես՝ լուրջ պոետ:

Արտույտի նման ես էլ երգում եմ,
Ձեռն կարող չերգել, չնվաճել,
Մեկ հողի վրա, մեկ երկնքում եմ,
Հարբածի պես եմ, ե՞րբ եմ խմել:

Այդպես լինում է, երբ որ բացվում են
Ջերմ սիրած կնոջ աչքեր վրաս,
Ես երգի գինով հարբում, հորդում եմ,
Չի թվում ոչ մի բարձունք անհաս:

Այդպես լինում է, երբ ականջում իմ
Արվեստի գործ է հնչում վսեմ,
Իմ ողջ էությունս այրվում տենչում եմ,
Որ ես էլ այդպես խորունկ երգեմ:

Բայց ես պարզապես հենց նոր լսել եմ
Խոռով սրտերի կանչն իրարու,
Ուրեմն այդպես լինում է մեկ էլ,
Երբ քեն չեն պահում սրտեր երկու:

Բարձր երգում եմ ու երագում եմ
Այն դյութիչ երգը իմ չգրած,
Որ բոլո՛ր-բոլո՛ր բաժան սրտերը
Պիտի խոր սիրով կապի միմյանց:

ՄՍՇՏՈՑՅԱՆ ԲԱԼԼԱԴ

Հուր հեր ուներ նա և մորուսն էր բոց,
Բայց վիշապաբաղ մեր Վահագնը չէր,
Զեռքին լայնալիճ աղեղ նա չունէր
Եվ ոչ էլ սուտեր:
Ընդ եղեգան փող մի այք ելաներ,
Ելաներ մի բեն, մի գիմ, դա, եչ, զա...
Եղեգան փողից նա ձեռամբ հաներ,
Տար իբրև նվեր քաջացն հայոց,
Որ կովում էին՝ դարձած հուր ու բոց
Վիշապների դեմ ոգու աշխարհում:
Ցնծում էր նրանց առաջնորդն հուրհեր,

Նա, որ հանում էր հրեղեն գրեր
Իր մեջ բոնկված եղեգան փողից:
Եվ անցան դարեր:
Նա տունս մտավ հաղթած, վաստակած
Ու ստոք-փստոք բազմեց իմ դիմաց:
Տեսավ դատրիկս սեղանին կբել
Ու գրում է «ա»,
Քնքուշ թաթիկը թղթերի վրա
Թողնում է գծեր՝ ծուռուսուռ քաշված՝
Տառի ճյուղիկներ՝ մատներով հաշված,
Երկնում է ասես և ոչ թե գրում:
Ժպտաց իմ հյուրը, սուզվեց մտքերում
Ու հետո հասեց հայացքը երկինք,
Ինչպես մեզ մանկուք ծանոթ նկարում.
— Մեզ միշտ մեռցրին, բայց մենք ապրեցինք,
Ասաց քաջաձայն ու ելավ տեղից,
Գնաց ընդստաջ ծագող արևին:
Օ, ի՞նչ արև էր,
Եվ երկներ երկին, և երկներ երկիր,
Ընդ եղեգան փող հանճարն ելաներ,
Ու նստած նրա լույսերում վսեմ
Դատրիկս գրեր
Հինավուրց գրեր:

ԲԱՆԱՍՏԵՂԾԻ ԾՆՈՒՆԴԸ

(Բալլադ)

Մուօն է ծանր չոքել նախնադարի վրա,
Եվ մուօը ճեղքելով երևում է ահա
Ինձ մի խարույկ:
Բոլորել են շուրջը մարդիկ դեռ վայրենի
Ու տված ձեն-ձենի՝
Սպասում են որսի խորովվելուն,
Որ մարդ էր քիչ առաջ:
Բայց նրանցից մեկը մի քանի քայլ հեռու
Կուչ է եկել ստուած:
Աչքերի մեջ նրա բոցն է պարում առույգ,
Աչքերի մեջ նրա մի կրկնվող խարույկ,
Որ չի տաքացնում:
Վտարել են նրան տաք խարույկի մոտից,
Իսկ շուրջը ձմեռ է, կոշտացած ձյուն:
Վագրի մորթին հագի քրքրված է, լուսված,
Քամին ամեն ճեղքից ներս է խցկում լեզուն
Ու մահվան համբույր է տալիս նրան:
Խարույկի մոտ հիմա տաք է այնպես,
Կրակն է ճարճատում, լեզու հանում ասես
Զմռան ցրտի վրա:
Դե կրակ է, ցուրտը ի՞նչ կարող է անել,
Որ նրանից դողա,
Փայտի պաշար շատ կա
Ու քանի դեռ փայտ կա՝ նա կլինի կրակ
Ու լեզու կհանի ցրտի վրա:

Իսկ այս արտաքավածը սպասել է, չունի
Ցրտին դիմանալու պաշար արդեն,
Բացվող առավուրը նա չի տեսնի,
Քիչ էլ, և ստուած դին կրակին կպահեն,
Որ միսը հեշտամարս, համեղ լինի:
Ի՞նչ էր մեղքը նրա:
Մարդիկ, ասել էր նա,
Էլ մարդկային արշամբ չանենք մենք կերուխում,
Էլ մարդու միս չուտենք այսուհետև,
Եվ իր միսն են նրանք ահա ուտում:
Կերան ու պարեցին, հետո, սակայն,
Էլ մարդկային արշամբ չարեցին կերուխում:
Մուօն է ծանր չոքել նախնադարի վրա,
Եվ մուօը ճեղքելով երևում է մի լույս՝
Բարի սիրտն է նրա,
Որը կերան թեկուզ,
Բայց մնա՛ց լույսը ջիհջ:
Նա մարդկային ցեղի պոետն էր առաջին:
Ապրում է, կա
Հետո ծնված բոլոր պոետների արտում,
Իր պես հսկա:

ԵՐԿՈՒ ԱՄՊ

Ամպը ամպի դեմ ելած՝
Սրտապատառ որոտաց,
Դղրդոցում ամենի
Վախն էր ասես թաքցնում,

Խղճի բոցն էր հանգցնում
Ծանթերի մեջ, հրդեհի:
Հեշտ չէր կովել երևի
Իր պես զինված ամպի դեմ,
Ու գոռում են ահալի
Երկու բանակ, երկու ամպ
Մահ տեսածի սաստկությամբ:
Սիրտ չեն անում մեկ-մեկու
Կործքը խոցել ահարկու,
Եվ շանթերն են ընկնում ցած,
Լեռան կողին փշրվում:
Է՛խ, դուք, ամպեր, թե իրավ
Կովել չէիք ցանկանում,
Ինչու՞ էիք ամբարում
Ձեր ծայքերում աչքբան շանթ:
Ամբարել եք և ահա
Չուզենալով էլ կովել
Մարտի դաշտ եք դուք նետվել
Սրտապատառ որոտով:
Թե անձրև եք տեղալու,
Ներում ունեք, ամպեր, դուք,
Միշտ էլ աչդես ահարկու
Ջոհողությամբ է լինում
Բարու ծնունդն աշխարհում:

ՏԻԳՐԱՆ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ

Դու դազադի մեջ, դու հավետ լուսծ,
Ծաղիկներ էի ես մտքով դնում
Քո լուռ աճյունին
Ու լսում էի ձիու վրնջյուն,
Ծախմատի անհուն տախտակի վրա
Այդ քո նծույզն էր դոփում հաղթական
Ու ամբակներով քանդում էր նորից
«Թշնամու» բերդերն իրենց հիմքերից:
Քո նծույզը հուր...
Ես տեսնում էի սլացքը նրա
Եվ այն կայծերը, որ սրկվում էին
Պայտերից ոսկյա:
Ես տեսնում էի քո զինվորներին,
Որ ընկնում էին ճակատից զարկված,
Հերոսի նման,
Ես տեսնում էի և սպաներին,
Որոնք քեզանից առած հմտություն՝
Գրոհի էին գնդերը տանում:
Քո թագուհին էր իմ դիմաց հատնում՝
Մերթ հագած ճերմակ ու մերթ սև շորեր,
Սակայն նշան չէր սևը պարտության,
Վկա է դրան թեթև քայլվածքն այն,
Որով մի դիրքից մյուսն էր գնում:
Քո թագավորը վախ չունեք սրտում,
Իր բանակն ամբողջ կովի դաշտ ճամփած՝
Խնջույք էր անում,
Գիտեր, որ ինքը գերի չի ընկնի,

Կապկալված, գերված
Ուրիշ արքաներ իր մոտ պիտի գան,
Իսկ եթե բան է՝ մեկն հաղթող լիներ,
Գիտեր, նրանից կփրկեր իրեն
Երկաթե, ամուր «ոչ-ոքիդ» հաստատ:
Երբեք չեմ սիրել թագավորներին,
Բայց քո արքային պաշտեցի սրտանց,
Որ հանգիստ նստած՝ խնջույք էր անում:
Դու քանի՞ անգամ հեծած քո հուր ձին՝
Մեծ հաղթանակով տուն դարձար «կովից».
Այս, չսովորեց աշխարհը քեզնից
Հաղթանակ տանել առանց արյունի:

ԳԱԶԱՆԱՆՈՑՈՒՄ

Ինչպե՞ս, ինչպե՞ս դու շղթայի զարկվեցիր,
Առյուծ էիր, անապատի շեկ կայծակ,
Ո՞նց ես հաշտվել, որ դրել են քեզ վանդակ,
Աչքերիդ դեմ ցանցել երկինքն իսկ անծիր:

Քար են նետում մանուկները քեզ վրա,
Կանաչք իրենց թաշկինակներն են ճոճում,
Լեզու հանում, քեզ ծաղրելով քրքջում,
Չէ՞ որ վանդակն ամուր է շատ, պողպատյա:

Բայց դու անս մոնչացիր խղաքար,
Եվ ճաղերը մոմից շինված թվացին,

Կանաչք փախան՝ նման հողմից քշվածի,
Մանուկները ծառը ելան դողահար:

Ու գլորվեց մոնչյունդ ժայռի պես
Ու դղրդաց ձորերն ի վար անարգել,
Այդ մոնչյունն ո՞վ կարող է վանդակել,
Թեկուզ գերված, բայց դու էլի առյուծ ես:

Չեմ հավատում բարիներին,
Երբ խոսում են անվերջ իրենց բարությունից,
Երբ չեն տեսնում աչքը չանգող իրենց թերին,
Սակայն քոնը քրքրում են ներսից, դրսից:
Զգույշ եղիր, որ պատահմամբ չտրորես
Գետին ընկած մազը նրանց,
Նրանք այնպես վարպետորեն կծպտան քեզ,
Որ չես տեսնի այդ ժպտի տակ օձը զարթնած:
Մի հավատա բարիներին,
Երբ խոսում են անվերջ իրենց բարությունից,
Խոսքի քողով պարուրում են իրենց հոգին,
Քողը ետ տար ու տես ճանկերն սպառնալից:

Զյուն է գալիս այնպես մեղմ ու այնպես տաք,
Փաթիլներն են օրորվում լույս նագերով,
Փարվում դեմքիդ, կորչում սիրուց հավվելով
Կամ հեզաբար փովում են լուռ ոտքիդ տակ:

Դեռ սպասիր, նրանց սիրուց մի ցնձա,
Վաղը նրանք կմիանան քամու հետ
Եվ սպիտակ ոռնոցներով չարստեն
Կլցնեն դաշտ, անտառ ու ձոր ծայրեծայր:

Եվ կծեծկեն, կհանկոտեն դեմքը քո,
Որ համբուրում էին երեկ քնքշորեն,
Կհոհոսան իրենք վրադ, կծաղրեն,
Բայց կհիպկեն քո բերանը պաղ ձեռքով:

Սակայն հիմա երկինքն ամպել կաթնագույն,
Զյուն է գալիս ի՞նչ մտերմիկ ու ի՞նչ տաք,
Եվ դա հանկարծ ավելին չէ, քան դիմա՛կ...
Սեր, խաբում ես դու էլ հաճախ ինչպես ձյուն:

ՀԱՅՐԱԿԱՆ

Որդու՝ Զավեն Վարդանյանին

Ա.

Այն մի օր էր, այնպես նման այլ օրերի,
Բայց և ուրիշ, բայց և ուրիշ մի օր էր այն,
Դու բախտեցիր քո թաթիկով դուռն աշխարհի,
Եվ քո դիմաց բացեց աշխարհն իր դուռը լայն:

Ամպն իջել էր ու բարուրել առավուտը,
Ամպոտ լույս էր, ամպոտ ծառեր, շենքեր ամպոտ.
Մառախուղ էր, չէր հեռանում, ալարկոտ էր,
Վայր էր ընկել ու մնացել դռների մոտ:

Բայց ինձ համար լուսավոր էր առավուտը,
Իմ հոգու մեջ քո աչքերից լույս էր կաթում,
Թրթոտում էր արդեն իմ մեջ քո կարոտը,
Ինչպես ծիլը նոր դուրս ելած՝ գարնան արտում:

Եվ նորածիլ այս կարոտը աչքն իր բացում,
Քեզ չտեսած՝ քո պատկերը արարում էր,
Է՛լ չեմ տեսել այսպիսի պահ՝ լիքն ու ցնձուն,
Սաես մի մեծ, լուսե երգի վարարում էր:

Այն մի օր էր՝ քո ծնունդն էր այս աշխարհում,
Ու աշխարհը նորանում էր,
Քո սուր ճիշով դու լույս էիր ազդարարում,
Մառախուղը՝ ինչքան էլ ծույլ՝ հեռանում էր:

Բ

Բարի գալուստ,
Ես սասցի «Բարի գալուստ», չհասկացար,
Դեռ չգիտես դու ոչ մի բառ,
Սուաջին բառ կունենաս դեռ:
Եվ առաջին գարուն, ամառ,
Նաև աշուն, նաև ձմեռ
Մի տարվա մեջ կունենաս դեռ
Եվ առաջին տարի՝ նույնպես:
Մի օր դպրոց կուսնեն քեզ,
Եվ կունենաս առաջին հինգ,
Երազով լի մի ողջ երկինք,
Թե՛ն թևավոր ծնված լինես:

Դեռ կունենաս սուաջին երգ,
Բարձր երգիր, ամբողջ ձայնով
Եվ կունենաս սուաջին սեր,
Գուցե նաև սուաջին վերք,
Փշով լիքն է սիրո ճամփան:
Դեռ սուաջին ինչքա՞ն շատ բան
Սպասում է քեզ հոտնկայս
Աշխարհում այս:
Բարի զալուստ,
Բարի ճամփա:

Գ.

Քո աչքերը
Սև թանաքի երկու կաթիլ դեմքիդ վրա,
Ինձ են պլշած նայում ահա:

Քո ձեռքերը
Փոքրիկ-փոքրիկ երկու շուշան կրծքիդ դրած,
Ես բուրմունքն եմ զգում նրանց:

Քո ոտքերը,
Մի մատնաչափ քո ոտքերը այնպես փխրուն
Ափիս մեջ եմ տեղավորում:

Քո սրտիկը,
Բայց չգիտեմ քո սրտիկը
Ես ինչի՞ հետ համեմատեմ,
Ինձ անծանոթ շատ խոհեր կան քնած այնտեղ,
Պիտի զարթնեն:

Գ.

Ով ծնվել է՝ պիտի ապրի:
Բայց նա մեռավ՝ չբոլորած դեռ մեկ տարին:
Ունեք խելոք, ագահ աչքեր՝
Հառված մարդկանց ու աշխարհին,
Ինչ կա, չկա գետնի վրա ու գետնի տակ
Ցանկանում էր ասես մեկեն ողջն իմանալ:
Անտակ աչքեր, աչքեր անհագ,
Բախտից լինենք շնորհակալ,
Որ այդպիսի աչքեր էլ են մեկ-մեկ լինում:
Մենք կանգնած ենք հիմա, տղաս,
Նրա փոքրիկ շիրմի դիմաց.
Քո եղբայրն է այստեղ թաղված
Եվ իմ որդին՝ աշխարհ եկած քեզնից առաջ,
Նրա անունն ես դու կրում,
Լոկ անունը մեզ հետ մնաց:
Արթնանում է նորից իմ մեջ մի խուլ հառաչ՝
Տեսնես ի՞նչ էր նա դառնալու,
Ո՞վ է թաղված այս հողի տակ՝
Անհուն հանճա՞ր, թե՞ ստահակ:
Լաց, մղկտա, ասաց մի ձայն,
Աչերի մեջ նրա անհագ
Կար մի շքեղ արևածագ:
Մի հորինիր, թե երևի
Փոքրիկ, փոքրիկ հողաթումբն այս
Գերեզմանն է մանուկ չարի:
Գուցե թե քեզ այդ խաբկանքը մխիթարի,

Բայց դու աշխարհն մի ցածրացիր, թեկուզ մի պահ,
Պոետները չեն որոնում թեթև ճամփա,
Եվ վաղուց են նրանք սովոր ծանր վշտին
Թե՛ սեփական, թե՛ աշխարհի:

Ե

Ի՞նչ պիտի դառնաս, երբ որ մեծանաս,
Ախ, երանի թե մի մեծ գյուտարար.
Մի միտք է անվերջ տանջում ինձ, տղաս,
Գյուտարար լինես, որ պատնասխան տաս:
Վայրենի մարդը, երբ մարդակեր էր,
Մի քար շարունակ իրպեսի վրա,
Ընկավ զարկվածը, որ պիտի դառնա
Զարկող մարդուն կեր,
Բայց քարը չընկավ,
Թափ առած թոռավ տարիներ, դարեր,
Աղեղից պոկված անտ դարձավ դիպուկ
Ու էլի թոռավ տարիներ, դարեր,
Արկ դարձավ հետո, ոռնաց մահաբեր,
Քանդեց, սպանեց, բայց չընկավ գետին,
Տարիներ, դարեր թոռավ նա էլի:
Ահագնացել է հիմա ավելի՛
Իր մեջ ամբարած ուժն ատոմային:
Զարն ինչ ստեղծեց իր ճանապարհին՝
Բարին արարեց հերքող պատասխան,
Բայց ատոմի դեմ աշխարհակործան
Փնտրում, չի գտնում պատասխան, հերքում:
Դրա համար եմ ուզում ես, տղաս,

Որ դու հանճարեղ գյուտարար լինես.
Կա մի մեծ սկիզբ՝ մի աշխարհ ուրիշ,
Բանալին՝ նրա փակ դուռը բացող
Լինի քո ձեռքում:
Բավ է, վերջապես գետին ընկնի թող,
Հանգչի հանդարտված
Սյն արևոտ քարը՝ վայրենու անտառ:

ՈՐԳԻՍԱԿԱՆ

Ա.

Ողջույն, Արեգակ, փոթորիկներին քո հրակարմիր...
Լեզենդ չի հյուսվում այս ատոմային անլեզենդ
դարում,
Լեզենդ չեմ հյուսում, լոկ զգում եմ ես իմ երակներով,
Որ իմ արյունը քամված է կարմիր քո կրակներից:
Գուցե չես հիշի, այդ շատ վաղուց էր,
Միլիարդ ու միլիարդ տարիներ առաջ,
Քո հզոր ձեռքը խփեցիր կողիդ,
Քո բռով մի բուռ կրակ անտեցիր տիեզերքի մեջ,
Ստեղծ կրակը, դարձավ երկրագունդ,
Ու ես ծնվեցի նրա կողերից, մեկ է՝ թե քեզնից:
Քո որդին եմ ես, ապացուցված է,
Զե՞ որ զգում եմ իմ բիբերի մեջ
Խտացած ուժն ու պայծառությունը ճառագայթներիդ,
Իմ սրտի խորքում՝ խռովքները քո,
Իմ ցավերի մեջ՝ զալարումներդ:

Ես քո որդին եմ ու շատ եմ հարցրել կողքիդ
աստղերին,

Թե արդյոք չունե՞ս դու ուրիշ որդի
Եվ իմացել եմ, որ չես պարզել ինձ եղբայր կամ
քույր,

Ես միևնույնս եմ:
Միլիարդ ու միլիարդ տարիներ առաջ
Ինչ-որ քաղցրություն զգացիր հանկարծ շահել
կրծքիդ տակ,

Չիմացար՝ ինչ է, չիմացար՝ ինչից, չիմացար՝ ինչու,
Բայց կռահեցիր, փառք ու պատիվ քեզ,
Որ եթե մնա այդ ինչ-որ բանը քո էություն մեջ,
Պիտի գալարվի քո բոցերի հետ ու մոխիր դառնա,
Եվ քեզնից հեռու նետեցիր նրան:
Այդ ինչ-որ բանը ես եմ, Արեգակ,
Այդ ինչ-որ բանը սիրտս է կրծքիս տակ
Եվ մի անանուն թրթիռ՝ սրտիս մեջ:
Էլ դու չունեցար այդպիսի երկունք,
Չղջացի՞ր արդյոք, որ մարդ ես ծնել,
Թե՞ ինձ ծնելիս ուժասպառ եղար:

Բ

Այդպես մի թեքվիր, որ տեսնես որդուդ,
Մի քիչ մոտենա՛ս շնչասպառ կրակներս,
Ուզենաս գրկել՝ ես կճեճեճեճե՛րամ ու կմոխրանամ,
Դու ինձ չես տվել հզորությունդ,
Ես թույլ եմ, մայր իմ.
Ես թույլ եմ, թեև ջերմամիջուկյան ուժն իմ աչքերում՝

Այնպես կարող եմ նայել բռններին, որ վախից փուլ
գան:

Ես թույլ եմ աշնան մի տերևի չափ,
Փչում է քամին, ու ես դողում եմ,
Անձրև է գալիս՝ ես սրթսրթում եմ,
Բուրն է ինձ ծեծում՝ ես հազ եմ դառնում ու արշուն՝
թթում,

Դու ինձ նայում ես մի քիչ բարկացած՝
Ես վայր եմ ընկնում գլխապտուույտից:
Եվ գոր կարծում եմ, թե զլխիս մեջ եմ մտքերը
ծնվում,

Նրանք ծնվում են ներբաններիս տակ, երբ բոքիկ
եմ ես,

Յրտից կույ եկած իմ ուսերի մեջ, երբ բուքն է փչում,
Իմ ստամոքսում, երբ դատարկ է նա:

Դու քրքջում ես, դու ծաղրում ես ինձ,
Ձե, իմ որդին չես, ասում ես հաստատ,
Դու խեղճ, անճարակ, դու նաև չար ես,
Որ հայտնագործել ուժը ատոմի
Եվ քիչ է մնում, որ կյանքից գրկես
Ամեն ապրող բան:

Քո աչքերի մեջ կանաչ աչքեր կան:

Գ

Այո, Արգեակ,
Իմ աչքերի մեջ կանաչ աչքեր կան,
Այդպիսի աչքեր, ասում եմ, մեկ էլ դևերը ունեն,
Սակայն դրանով ոչ թե ժխտվում է,

Այլ հաստատվում է, որ որդին եմ քո:

Օ, լսիր, մայր իմ, դու էլ ես բախվում քո մեջ ու
քեզ հետ,

Անվերջ պայթյուններ, հրե մրրիկներ,
Միշտ կույի մեջ ես, միշտ խոռվահույզ,
Ե՛վ անագորույն, և՛ ժանտ, և՛ ազահ:

Չլիներ եթե օդի շերտը հաստ,
Ինձ կույ կտայիր,
Ինչպես Քրոնոս անգութ աստվածը՝ իր
զավակներին

Եվ որտեղ օդը ճեղքել ես փոքր ինչ,
Անապատներ ես փռել սողակեզ,
Ուր որպես քո սև խոհերը բեկ-բեկ
Օձերն են սողում:

Դ

Մայր իմ, ներիր ինձ՝ անառակ որդուդ,
Որ հազար բարիդ հիմա մոռացած՝
Հիշեցի չարը՝ հարյուր անգամ քիչ:
Դու ինձ կյանք տվիր, բայց տիեզերքում
չթողիր անտեր,

Ինչպես անարժան մայրերն են անում,
Շուրջս փռեցիր լույս ու ջերմություն
Եվ մրգեր պես-պես և ոսկի հասկեր:
Բայց ես այնքան էլ կորած որդի չեմ,
Ես շատ կուզեի դու իմանայիր,
Որ դոնկիխոտյան իմ երկար հասակն ինչքան
էլ ընկնում,

Բայց էլի վեր է կենում անկոտրում
Եվ ի մարտ նետվում ընդդեմ քսության:
Իմացիր նաև,

Որ իմ ֆառուսյան անհագ ծարավով
Ատումն եմ պեղում՝ այնտեղ քո լույսը գտնելու
համար,

Պատճառն եմ փնտրում, թե ոնց է լինում,
Որ իմ գտածից Մեֆիստոֆելը ռուսեր է ձուլում:
Հավատա, մայր իմ,
Իմ սրտի խորքում պահել եմ անեղծ այն

ինչ-որ բանը,
Որ դու չուզեցիր քո բոցերի մեջ մոխրանար,
կորչեր:



ՍՈՆԵՏԵՐ

Ընորհակալ եմ քեզանից, սեր իմ, սեր,
Որ դու բարձր ես, որ անհաս ես դու այդպես,
Որ չքնաղ ես ու միշտ քեզ եմ ձգտում ես
Ու չեմ հասնի քո բարձունքին անասուկեր:

Ու երիցս շնորհակալ եմ դարձյալ,
Որ դու խիստ ես, ինչպես ահեղ դատավոր,
Ամեն ուժ չէ, որ համարում ես հզոր,
Ամեն երգ չէ, որ կարող ես դու կարդալ:

Քո հոգեքերի մի շարժումով ինձ սաստող
Ինձ չես թողնում, որ մտածեմ իմ մասին,
Թե ես իբր բանաստեղծ եմ նոր ծագող:

Թող մի մեծ էլ պակաս լինի Պառնասում,
Ծաղրում ես դու, ու ես գոհ եմ վերստին,
Որ քո խոսքով ես ինձ պոետ չեմ կարծում:

Որ քո խոսքով ես ինձ պոետ չեմ կարծում,
Ոճ, դրանից տառապում եմ ավելի,
Եկեք, ինձ պես տառապողներ աշխարհի,
Մեր լացը լանք, ողբը ողբանք այս ցածում:

Նախ վտարենք մեզանից այն կեղծ մեծերին,
Որ կարծում են, թե չեն ծնվել անտաղանդ,
Ողբանք ձայնով, անկեղծությամբ մանավանդ,
Որ չտվինք ոչ մի մեծ գործ աշխարհին:

Ինձ թույլ տվեք նախ ես խոսեմ, սսեմ ձեզ,
Որ մտքերս, երազներս լուսեղեն
Նրա համար անկրակ եմ մոխրի պես:

Ու գանգատվեմ, որ կարծում է անտարբեր,
Թե իմ մոխրում պիտի մտքեր գուր պեղեն,
Փոսած ծառ եմ, չեմ տա երբեք ընձյուղներ:

Փոսած ծառ եմ, չեմ տա երբեք ընձյուղներ,
Ախ, ինչպե՞ս ես դու ինձ փոսած անվանել,
Երբ քո կանաչ սերը ինձնից չեն հանել,
Երբ իմ սրտում քո կարոտն է ծաղկում դեռ:

Որ գնում ես, հետևում է աչքս քեզ,
Աչքս կորցնի, քեզ հոգիս է հետևում,

Հոգիս քնի՝ երազներս են արթնանում,
Որ քնիս մեջ շուրջդ հաճեն սիրակեզ:

Որ գնում ես, արտիդ զարկն եմ ես լսում,
Քո արտով եմ զգում իրերն այս բոլոր,
Իմը չկա, մեռավ մի տեղ իմ ներսում:

Մի՞թե լեզուդ սխալվելու վախ չուներ...
Ախ, գուցե թե էլի իմ ճիշտն է խոտոր,
Փտած ծառ եմ, չեմ տա երբեք ընձյուղներ:

Փտած ծառ եմ, չեմ տա երբեք ընձյուղներ,
Իմ ճյուղերին հավքերը չեն ճովողի,
Եվ հովերը տաքուկ շնչով սիրողի
Իմ ականջին չեն փսփսա ողջ գիշեր:

Իմ գիշերը լիքն է միայն լուությամբ,
Սև է այնպես այդ լուությունն ու խեղդող,
Մութ ջրհորում հիմա ընկած լինեմ թող,
Գեթ կկուլեմ խեղդվող մարդու սաստկությամբ:

Հիմա՝ անճար, ո՞ւմ օգնության կանչեմ, ո՞ւմ,
Որ ինձ փրկի լուությունից քո ճնշիչ՝
Իմ մեջ դարձած մի հուսահատ մահվան ճիչ:

Փոթորիկ է քո լուությունն իմ արտում,
Իսկ ես հզոր այն կաղնին չեմ երբեմնի,
Կկոտրվեմ՝ մի փոթորիկ էլ լինի:

Կկոտրվեմ՝ մի փոթորիկ էլ լինի,
Իսկ դու անհոգ՝ դալար շիվեր ես տնկում,
Որ ծառ դառնան, մի օր շողան երկնքում՝
Ճյուղերի մեջ խնձոր-աստղերն անհունի:

Ախ, լինեի խնձորենին քո տնկած,
Քո մատների բույրը տայի աշխարհին,
Իմանայիր սերս ինչքան է խորին
Ու նոր միայն կոտրեիր ինձ, անասոված:

Սիրոս, լսիր, ափսոսանքից լուռ տնքաց,
Ափսոսում եմ իմ չպտղած իղձերին,
Որո՞նք պիտի քո քաղցրությամբ լցվեին:

Լաց է լինում սիրուս ծաղիկը ջարդված,
Ծառերն անցան ինձ պես սիրո լացով լի,
Այսպես ջահել, դեռ չդարձած ծերունի:

Այսպես ջահել՝ դեռ չդարձած ծերունի՝
Սիրոս լիքն է ընկնող ծառի սարսուռով,
Ծառեր տնկիր ու թող աճեն անխող,
Մեկն էլ գուցե շիրմիս վրա հով կանի:

Այդ ծառեր չեն, մահվան դեղին աչքի դեմ
Հազարաձև արարում է դա կյանքի,

Ինչքա՞ն ծառեր ձեռքդ պիտի դեռ տնկի,
Որ ասես, թե մահվանն հաղթել ես արդեն:

Շուսպում ես, ի՞նչ է եղել, սիրելիս,
Գալիք տարինն անյնպես ունի ծառատունկ,
Նոր ծառերի ծլարձակում ու ծաղկունք:

Եթե մահ կա, քեզ չէ, ինձ է մոտ գալիս,
Սիրոս է մաշված, գուցե հանկարծ այս գիշեր
Ես կփակեմ իմ աչքերը՝ մի ծով սեր:

Ես կփակեմ իմ աչքերը՝ մի ծով սեր
Ու կտեսնեմ քո ծառերը ծաղկելիս,
Քեզ կտեսնեմ գուցե հանկարծ ժպտալիս,
Երբ կբացես իմ գաղտնիքը՝ թաքուն դեռ:

Քոնի կողքին, քեզնից գաղտնի, այս գիշեր
Ես իմ անշուք խնձորենին տնկեցի,
Երկարում է ահա թելը իմ հույսի,
Որ քոնի հետ իմն էլ կարճի, կելնի վեր:

Այդ ո՞ւմ ճամփին գեթ մի ուրախ օր չկա,
Կա, պիտի գա և իմ օրը անտրտում,
Երբ կողք-կողքի մենք կծաղկենք՝ ես ու դու

Վշտի աստված, թող գա օրս արևկա,
Դու այնքան շատ հառաչանքներ ունես խոր,
Մի տնքոց էլ պակաս լինի, ինչ կա որ:

Մի տնքոց էլ պակաս լինի, ինչ կա որ,
Մեր ծառերը անուշ բերք տան կողք-կողքի,
Մեր ծառերը, մեր իղձերը հրճվանքի
Փոքրիկ հողում իմ ընկերոջ, իմ եղբոր:

Նա էլ ինձ պես հիմա զարկված է սիրուց,
Բայց ոչ կնոջ, աչլ մի պատառ մայր հողի,
Միակ տենչն է՝ հողն իր ջանքով ծիծաղի,
Ավելանա բարին թեկուզ մի պտղունց:

Մեր ծառերը նա կջրի խանդավառ:
Ախ, ճիշտ լինեք, ոչ թե ցնորք միմիայն,
Որ իմ սիրուց ընկեր դարձար դու նրան:

Թե ցնորքս ցնդի հանկարծ հողմավար,
Ո՞ր անգուրջ կասի լեզվով թունալից՝
Աշխարհը չի աղքատանա դրանից:

Աշխարհը չի աղքատանա դրանից,
Թե իր վշտից իմ արցունքը պակասի,
Բայց մի կաթիլն հիմա փոխվեց երկուսի,
Ախ, ընկերս բան չի բռնի էլ նորից:

Այս աշխարհից պակասեց մեծ մի գորով,
Որ կհաներ մեր ծառերին էլ բաժին,
Մի արարիչ տարան հողին հանձնեցին
Նրա մահվան լացակումած թափորով:

Հազար ափսոս նրա ջանքին չթափած
Եվ թափածին, որ զուր կորչում է հիմա
Եվ այն հողին, որ չծաղկած կմնա:

Ախ, ես անբան, մեծ ծառերը չորացած
Չայն են տալիս, դու էլ մեռիր, ասում ինձ,
Մի ծերուկ էլ պակաս լինի սեղանից:

Մի ծերուկ էլ պակաս լինի սեղանից,
Մեռիր, գնա, ասում եմ ինձ ես ինքս էլ,
Իմ ընկերոջ երազներն եմ մոռացել,
Նրանք, ավաղ, թոհիչքի թև չեղան ինձ:

Նա չտեսավ ծլարձակումն իր իղձի՝
Փունջ-փունջ ծիծաղ քարքարուտում մի պատաս
Եվ հողատեր իր աչքերը փակեց հար,
Ես՝ աներազ, նրա սրտով չապրեցի:

Ներիր, ընկեր, որ օր եկավ այսպիսի,
Հիմա արդեն հիշում եմ քեզ անհատաչ,
Էլ չես գալիս, չես տեսվանում իմ առաջ:

Գու էլ, իմ սեր, մի օր սիրտս չես հուզի,
Զուր կխայթես՝ խեղճ ծերունին ինչ է որ,
Ում է նրա տնքտնքոցը հարկավոր:

Ո՞ւմ է նրա տնքտնքոցը հարկավոր,—
Անիմաստ հարց, երբ չկա վիշտն իմ դաժան,
Կանչում եմ՝ եկ, օ, խենթության աստղածամ,
Օտտ եմ հոգնել լրջությունից սգավոր:

Պիտի պարեմ, ինձ խենթ նվազն է կանչում,
Անմիտ սեր էր, հիմա արդեն այդ գիտեմ,
Անա, ահա էլ չեմ տեսնում քեզ արդեն,
Ոչ, խարկանք չէ իմ հուսահատ անուրջում:

Ինձ այսուհետ էլ չես տեսնի տխրադեմ,
Իմ ընկերոջ մահվան վշտին հաղթեցի,
Բավ է հոսի առուն սիրո իմ լացի:

Ելնեմ, այրվեմ արևների մեջ վսեմ,
Կոխվ մտնեմ կայծակի դեմ անխնա,
Գոնն հիմա կասեն՝ ջահել մեռավ նա:

Գոնն հիմա կասեն՝ ջահել մեռավ նա,
Ու չեն ասի, թե ծերուկ է սիրահար,
Սիրո վշտից խեղճը դարձել խելագար,
Մերթ լալիս է, մերթ ծիծաղում իր վրա:

Ծիծաղելի շատ բաներ կան աշխարհում,
Բայց ուրիշ է սիրահարված ծերունին,
Ներում ունի անգամ դահճի սերը սին,
Բայց սիրավատ ծերունուն ո՞վ է ներում:

Ոմանք վրաս կծիծաղեն հաճույքով,
Ոմանք քարից ծանր խոսքեր ինձ կասեն,
Կամ ծաղրանքով ինձ կանվանեն ծեր բազե:

Քո անունը ոմանք կտան շշուկով
Ու ոմանք էլ, որ կիմանան գիծ չեմ ես,
Կասեն՝ այնպես խորն էր սիրում մեկին՝ քե՛զ:

Կասեն՝ անչպես խորն էր սիրում մեկին՝ քե՛զ,
Իսկ ես կասեմ, հիմա կասեմ, դեռ ջահել,
Իմ երկնքում գահո թափուր չեմ պահել,
Քո կարոտից ծիլ եմ դարձել տոթակեզ:

Սուտ էր, սեր իմ, աստղածամա խնդաղեմ,
Կեղծ էր պարս, հանգամ մի կես շարժումից,
Դու էլ գիտես, խաբում էի ինքս ինձ,
Որ իբր թե մեղմեմ ցավը իմ դժխեմ:

Օհ, սաստիկ է սիրուս մրրիկը դարձյալ,
Փլվող սուն եմ, դղրդոցս լսելիս
Գիտցիր, որ այդ քո սուրբ անունն եմ տալիս:

Այդ ժամանակ գուցե հոգիդ ծալեճալ
Կմեղեղվի իմ արցունքով գեթ մի պահ
Եվ սրտիդ մեջ գուցե մի լաց կարթնանա:

Եվ սրտիդ մեջ գուցե մի լաց կարթնանա,
Ես իմ սրտում քառապատկված կզգամ այդ,
Ինձ կտանջի մի կեղեքիչ խղճի խայթ,
Որ ասել եմ՝ էլ չունես փայլն առաջվա:

Ներիր, սիրուս խուժել էր մութ մի անհայտ,
Դարձյալ ներիր, որ մեղանչում եմ նորից,
Այն սուտ խոհով մխիթարում ինքս ինձ,
Որ մտքի՛ս մեջ, ոչ թե բարձր եմ ասել այդ:

Ինչ ասում եմ՝ միայն իմ մեջ եմ ասում,
Դու չգիտես ինչ խոսքեր եմ ասում քեզ,
Իմ մեջ կովում, իմ մեջ պաշտում քեզ այսպես:

Միշտ այսպես լուռ պիտի մնա իմ լեզուն,
Ախ, թող երգս քեզ ողջն ասի, երբ, անգին,
Թաց շիրմիս մոտ կկանգնես դու տրտմագին:

Թաց շիրմիս մոտ կկանգնես դու տրտմագին
Ու կտեսնես գուցե ծառերն իմ ու քո,
Գիտե՛ս, երբ՝ զինված բահ ու բլունգով,
Ջոր բերեցի նրանց համար, իմ անգին:

Ուզեցի ես, որ իմ ծիւծիւ քրտինքով
Իմ ընկերոջ անտեր հողը կանաչի
Եվ ուզեցի, որ մեր սերը բողբոջի
Ծառերի հետ, ծառերի մեջ իմ ու քո:

Բախտ է դարձյալ, գոնե ծառի տեսք առած
Մահից հետո լինեմ քեզնից անբաժան,
Կողքիդ կանգնած՝ ականջիդ սերս շրշամ:

Դու այդ կզգաս, ուշ կլինի չափազանց,
Թաց հողի տակ մի բուն հող եմ դարձել ես,
Ինձ ձայն կտաս, բայց դժվար թե ձայն լսես:

Ինձ ձայն կտաս, բայց դժվար թե ձայն լսես,
Հողի տակից իմ ձայնը քեզ չի հասնի,
Իմ սրտի մեջ մի հուր կարոտ կգարթնի,
Եվ իմացիր, երազ դարձած կգամ քեզ:

Էյ, ժամանակ, թեկուզ փխրուն՝ մարդ եմ ես,
Ես այդքանը և այդ կերպ եմ հաստատում,
Կյանքը այսպես պիտի ծիւ տա իմ արտում:

Յուրտ է, կասեմ, ու խոնավ է հողի տակ,
Ջուրս բռնիր, հանիր մուփից լույս ցերեկ,
Կանաչ խինդով լցնեմ մի ողջ տիեզերք
Եվ քո սիրով՝ անհունները կապուտակ:

Այն է կյանքում քաղցր ու ազնիվ առավել,
Որ ուրիշին երազ ու կյանք պարզես,
Քո պարզևով ինքդ լինես բարձր ու վես:

Երազիդ գամ, կասեմ, սեր իմ, քեզ այս էլ,
Որ քանի դեռ ծառ չես տնկել իմ շիրմին
Ոչինչն էմ ես, մեծ ոչինչը, մեծ փոշին:

Ոչինչն էմ ես, մեծ ոչինչը, մեծ փոշին,
Ի՞նչ իմաստ եմ, ավա՛ղ, փնտրում այդ «մեծում»,
Մեկ չէ՞, երբ որ մանրիկ որդն է քեզ կրծում,
Ադ ճիճվին ի՞նչ՝ մեծ ես եղել, թե չնչին:

Թեկուզ այդպես, ես կջրեմ մի ափ հող,
Ի՞նչ մեծ պարզև, ժառանգել բահն իմ նախնյաց,
Քարոթյունը, որ փոխանցել են միմյանց
Եվ մեծ սերը՝ իմ սրտում էլ տրոփող:

Էյ, ժամանակ, թեկուզ փխրուն՝ մարդ եմ ես,
Ես այդքանը և այդ կերպ եմ հաստատում,
Կյանքը այսպես պիտի ծիւ տա իմ արտում:

Ես կմնամ, թեկուզ ոչինչ էլ դարձնես,
Եվ կգոռամ քո հավերժ խոյ ախանջին՝
Ոչինչն եմ ես, մեծ ոչինչը, մեծ փոշին:

Ոչինչն եմ ես, մեծ ոչինչը, մեծ փոշին՝
Հաղթահասակ լեռներիս հետ բաղդատած,
Ռոջույն, լեռներ, եկել եմ ձեր գիրկը բաց,
Որ ճար անեք այս ամեհի իմ վշտին:

Ինչ է վիշտդ, ձայն են տալիս լեռներն ինձ,
Նայիր նրան մեր հավերժից և իսկույն
Կզգաս նրա փոքրությունը քո հոգում
Ու մեզ նման վարդ կհագնես անթախիծ:

Ինչքա՛ն շատ եք, ինչքա՛ն շատ եք ապրել դուք,
Բայց ապրելուց չեք ձանձրացել, իմ լեռներ,
Ծաղիկ հագած ծիծաղում եք վեհաշուք:

Կանաչ կյանքով էլի լիքն է կուրծքը ձեր,
Հող են դառնում ձեր մեջ դարեր բյուրավոր,
Ինչպես մամոնոն այս հողի տակ թաղված խոր:

Ինչպես մամոնոն այս հողի տակ թաղված խոր
Էլ չի քայլի, չի շորորա լեռն ի վեր,
Այդպես էլ իմ մանկությունը—մի թիթեռ,
Զի կայծկլտա այս լանջերին ծաղկավոր:

Բայց ես եկել իմ մանկությունն եմ փնտրում,
Ախ, մանկանամ, ցավն այս էլնի իմ սրտից,
Թող ձյուն տեղա ու սրբաթամ ես ցրտից,
Միայն չայրվեմ սիրո ծուխ ու բոցերում:

Ախ, ինչե՛ր եմ ցավից մղված ես ասում,
Ինչպե՛ս, ապրեմ առանց սիրո՞, առանց քե՛զ,
Չապրել է այդ, մտքի, սրտի բացասում:

Թող այս ցավից թառանչեմ ես աղեկեզ,
Թեկուզ խոցված՝ այս լեռան պես կանգնեմ գոռ,
Նրա նման սիրուս մեջ մեծ ու հզոր:

Նրա նման սիրուս մեջ մեծ ու հզոր՝
Այն պոետի, որ իր լեռները երգեց,
Իմ լեռներում ես երգում եմ դարձյալ քեզ,
Ձայնս զնգում է սարեսար, ձորեձոր:

Նորից ինչպես իմ մանկության օրերին,
Սեր իմ, տեսա հուր-հրեղեն նծույզներ,
Սակայն ոչ թե հեքիաթներից ճախրող վեր,
Այլ բուն կյանքից, որ ետում է իմ չորս դին:

Յուրացիմ բոցափրփուր բաշերով
Որպես ոգու անսանձ թռիչք իմաստուն,
Եվ ես տեսա այգաբացը գիշերով:

Այս պատրանք էր, բայց թողեց հուշ մի խնդրան:
Վերսպրում եմ այդ մեծ պատրանքն իմ բաժին,
Թեև սիրտս պարզված է սուր քո փշին:

Թեև սիրտս պարզված է սուր քո փշին,
Բայց ես էլի օրհնում եմ քեզ, իմ աճառք,
Եվ լեռներն իմ, որոնց ընկերն եմ մանկույթ,
Ինձ հետ սսես սպասում են քո ճամփին:

Արի, սեր իմ, այս կակաչները փնջիր,
Իմ լեռները սնուցել են քեզ համար,
Փոքրիկ-փոքրիկ հրդեհներ են բյուրհագար,
Որ լեռներս են ճամփիդ վստել ցան ու ցիր:

Արի, փուշ չեմ, որ ցուրտ քամուն դիմանամ,
Կակաչի պես իմ թերթերը կթափեմ,
Նույնիսկ եթե քամին սաստիկ չէ այնքան:

Ես կմեռնեմ, կապրի փուշը դժնադեմ,
Գիտե՞ս, այստեղ (մեծ սառույցի միջոցին)
Մամոնտն ընկավ, բայց գալերը ապրեցին:

Մամոնտն ընկավ, բայց գալերը ապրեցին
Ու սարերը լցրին իրենց ոռնոցով
Ու սարերը ու դարերը՝ կաղկանձով,
Որ դնչեղունչ ձգվեց հասավ մեր դարին:

Նրանց երկար ոռնոցում կա թաքուն խինդ,
Որ մամոնտը շունչը փչեց այն ցրտում,
Հիմա նրա ոսկորներից են նստում,
Որ նախանձն էր շարժում իրենց՝ քայլքով պինդ:

Սուսկալի է ծաղրը հաղթող նախանձի,
Օ, եկ, սերս իմ, մեկտեղ ատենք մենք նրան,
Սկսքք քիչ է իմ ատելը առանձին:

Գալերի դեմ հեշտ չէ կովել աճառքան,
Այլ է մարտը և կովելու զենքն այլ է,
Որովհետև նենգ են նրանք ու գալլ են:

...

Որովհետև նենգ են նրանք ու գալլ են,
Պիտի ոռնան ու հոշոտեն գալլաբար,
Նրանց սոցն չկա սիրո ճանապարհ,
Լույս չի վստվում, այնպես մուսլ, անփայլ է:

Լույսն ինչքան էլ կանաչ ներկես կամ կապույտ,
Կարմիր, դեղին, նարնջագույն— մեկ է այդ,
Նա կմնա էլի լույս ու ճառագայթ,
Միայն սևն է, որ կդարձնի ողջը մութ:

Սեր գույն չէ, սեր մահ է ու խավար:
Եվ գալերը այդ սևն ունեն անքանակ,
Լույս մարելով ճամփա անցան դարերդար:

Այս, կմարեմ իմ սիրո լույսն էլ նրանք,
Սեր իմ, ախրը շատ են ազահ, փուշ ու նենգ
Ու մամոնտի ազնվությունը չունեն:

Ու մամոնտի ազնվությունը չունեն
Սղվեսներն էլ՝ ցեղակիցները գայլի,
Նրանց խելքը թրի նման էլ փայլի,
Էլի խարդախ-խորամանկ են ի ծնե:

Մամոնտներ իմ, գայլն ու սղվեսն այնքան շատ,
Իսկ ձեզանից մեկն էլ չկա, չտեսանք,
Դուք մեզ համար մի անմարմին անըջանք,
Բարի, բարի, անհունորեն գթառատ:

Դուք այդքան մեծ, այդքան ուժեղ և սակայն
Փոքրին, թույլին երբեք չէիք հոշոտում,
Սնվում էիք թուփ ու խոտով միմիայն:

Ով ազնիվներ, սեր ու լույս կար ձեր սրտում,
Այդ է որ գայլն ու սղվեսը չունեին,
Որ ոչ մտով, միայն խոտով սնվեին:

Որ ոչ մտով, միայն խոտով սնվեին,
Չարության տեղ ունենալին պիտի խիղճ
Ու լինեին ջրի նման արարիչ,
Հրի նման տաք-տաք հացեր թխեին:

Ինձ բաց թողնես, սասց ջուրը, չեմ կորչի,
Այնտեղ եմ ես, ուր որ կանաչ կտեսնես,
Հուրը սասց՝ հաց կթխեմ սիրով ես,
Հացի քույրը տեղս ստույգ քեզ կասի:

Խիղճն հատաչեց՝ ինձ բաց թողիր թե հանկարծ,
Ջուր մի փնտրիր, ինձ չես գտնի ոչ մի տեղ:
Գայլ ու սղվես բաց են թողել խիղճն անդարձ:

Պահեց մամոնտն իր խիղճն անբիծ ու լուսեղ,
Փառք այդ վեհին և նրանց, որ խղճով լի
Ոսկորներն են հիմա պեղում մամոնտի:

Ոսկորներն են հիմա պեղում մամոնտի,
Որ իմ առջև մարդու պատկեր է առնում,
Մամոնտ ասում, վեսմ մարդն եմ հասկանում,
Գայլ ու սղվես՝ հոգիներ նենգ, տմարդի:

Փառք այն մարդուն, որ մամոնտի օրերին
Գթաց հանկարծ իր պես մարդուն, չկերավ,
Փառք մեծ գույթին, որ ջինջ լույսի պես հարյավ
Ու բաժանեց մարդ ու գազան իրարից:

Նա ստաշին բանաստեղծն էր աշխարհում,
Ես հոգուս մեջ լսում եմ երգը նրա,
Դողանջում է այդպես կարոտդ անհուն:

Հիմա, սեր իմ, մամոնտն ու մարդն այդ հսկա
Ոգի դարձած՝ թափառում են անկապանք,
Կան, հավատա, մեր սարերում էլ նրանք:

Կան, հավատա, մեր սարերում էլ նրանք՝
Սուրբ ոսկորներն այն անժանիք էակի,
Որ բնույթով պիտի լոկ խոտ ճարակի,
Ապրի իր պես, իր պես մեռնի անճարակ:

Ես էլ այդպես անճարակ եմ սիրուս մեջ,
Սերը չունի ոչ մի ժանիք, ոչ մի ճանկ,
Ես ինչ ունեմ՝ տանջանք է լուռ, հառաչանք
Նույնիսկ այստեղ, իմ լեռներում երկնամերձ:

Անգամ նրանք իմ կսկիծը չեն մեղմում,
Անհունն ինչպե՞ս փոքրացնես, չունի ծայր,
Սկիզբն ո՞ր է և ո՞ր կողմից ես սեղմում:

Ու թե թաղվեմ այստեղ սիրուս հետ անճար,
Գեթ կսփռիվեմ՝ ոսկորներ կան մամոնտի,
Ոսկորներն իմ նրանց խառնեմ ես պիտի:

Ոսկորներն իմ նրանց խառնեմ ես պիտի՝
Իմ լեռներին՝ հանճարների պես անգույզ,
Ինձ հոգի եք ախրը տվել, լեռներ, դուք,
Ինչ ստել եմ՝ ձեզ կբերեմ վերստին:

Ձեզ կձուլվեմ, կլեռնանամ ես ձեզ հետ,
Իմ սրտից էլ կծլեմ հուր ծաղիկներ,
Գուցե այստեղ կշրջես դու, սեր իմ, սեր,
Ու կհարբես սիրուս բույրով առհավետ:

Մերս բուրեց քո ճամփեքին՝ զգացիր,
Մաղիկ դառնա՝ չես տրորի դու նրան,
Կընչես բույրն օր ու գիշեր անձանձիր:

Կրծքիդ խիստ՝ կգուրգուրես ինձ անձայն...
Օ, ինչ բախտ է, բայց իմանաս այս մասին,
Գիտեմ, կասես, որ ցնորք է դա մի սին:

Գիտեմ, կասես, որ ցնորք է դա մի սին,
Մի խեղճ բլրի լեռ դառնալու խեղճ երազ,
Ախ, ի՞նչ տեղչամ, որ չծաղրես, ինձ զգաս,
Ինչպես լեռներն հառաչանքն իմ զգացին:

Մեծած կս չէ, որ հառաչել եմ սիրուց,
Ինձնից ստաց Պետրոս Դուրյան է եղել,
Հայնեմ աշխարհն արցունքով է հեղեղել՝
Դուք հայցելով, ինձ պես, սիրո սաստծուց:

Մեղա, մեղա, ախ, այս ինչե՛ր ասացի,
Թաղդատվեցի թեկուզ վշտով այսքան մեծ
Կեսնաշուր աչքերի հետ Պառնասի:

Աչքերիդ մեջ ծանոթ հեզմանքը զարթնեց,
Օ, մի խոսիր, սիրտս կառնես ոտքիդ տակ
Ու կծաղրես, որ փառատե՛նչ եմ անհազ:

Ու կծաղրես, որ փառաստեանչ եմ անհազ,
Մերթ մամոնոտի հետ եմ եւ ինձ բաղդատում,
Մերթ լեռներն իմ իբր զգում իմ սրտում,
Մերթ մեծ մարդկանց նման սգում գլխահակ:

Այդ է վարքը գաճաճների, կասես դու,
Լուռ կմնամ, դարձյալ քեզ չեմ առարկի,
Չէ՞ որ իրավ եւ մղվում եմ մեծ փառքի,
Շատ մեծ փառքի՝ քո ժպիտին կենսատու:

Բայց բառերով ինչպե՞ս ասեմ եւ այդ քեզ,
Ախ, իմանաս, շատ կտխրես երևի,
Որ ինձ համար սիրո մի տաք խոսք չունես:

Միայն ծաղր է, միայն հեզանք վերևի,
Իսկ եւ ցածում, իմ օրերում մահաձի՞ն
Մահվան մեջ էլ դարձյալ ձգտում եմ մեծին:

Մահվան մեջ էլ դարձյալ ձգտում եմ մեծին,
Կյանքում չեղա տիտանների նման վեհ,
Գեթ մահվան մեջ պիտի նրանց նմանվեմ,
Մեռնեմ հպարտ, ինչպես պատգամ տվեցին:

Մահվան պահին, եթե նստես սնարիս,
Հեշտ կմեռնեմ, ինչպես հերոսն է մեռնում,
Արծվի նման կյանքից մահ է սավառնում,
Ոչ ախ ու վախ, ոչ էլ սարսափ՝ գնալիս:

Իմ աչքերը եւ կփակեմ քեզ կարոտ,
Եվ կփակվեմ երկու թափուր լուսամուտ՝
մասնիկի վրա բացված ամեն առավոտ:

Սեր իմ, եղիբ վերջին պահին բարեգուր՝
Եվ մի հեզանք գեթ այս իղձս, որ լոին,
Մահվան մեջ էլ դարձյալ ձգտում եմ մեծին:

Մահվան մեջ էլ դարձյալ ձգտում եմ մեծին,
Որ մաստատեմ, թե հողն ինձ զուր չի սնել,
ձորը, ջուրը, օդը զուր չեն դաշնակցել,
Որ եւ լինեմ, լիքը լինեմ, ոչ թե սին:

Ձորսի կողքին կա և տարրը հինգերորդ՝
Եվ սերն է այդ, առանց որի չեմ ապրի,
Սերը՝ աղբ մայր բնության ու երկրի,
Սերը՝ հոգու կրակ և՛ ջուր, հող և օդ:

Յախսեմ ուզել էր, որ երբ մի օր գամ աշխարհ,
Սե՛ր լինես դու, դո՛ւ սեր լինես ինձ համար
կրակներով, նմայքներով քո շուշլ:

Այս ի՞նչ եղավ, հանդիպեցինք, և սակայն
Ձի ճառագում քո ժպիտը դյութական,
Կյանքում դու ինձ պիտի տալիր խորք ու փայլ

Կյանքում դու ինձ պիտի տայիր խորք ու փայլ,
Ստուած ձյուն եմ խոր ձորերում տխրության,
Ինձ չի հասնում նույնիսկ արևը ամուսն,
Ու՞ր ես, կյանքս ալիք դարձնող իմ ձևհալ:

Ահա եկել հին լողափը վերստին,
Քո հետքերն եմ ալիքների մեջ փնտրում,
Այն ալիքներն, ախ, էլ չկան աշխարհում,

Որ հաղորդեն քո տաք շունչը իմ սրտին:
Չկան և այն վայրկյանները տեսական,
Երբ իմ սրտին հանկարծ շողերդ ընկան,
Եվ դու դարձար սրտիս արև-տիրակալ:

Ախ, ծիլերս չայրեիր դու խոլաբար,
Երգ՝ ծիլերով հիմա լցված ծայրեծայր
Կարող էի ծովի նման ես ծփալ:

Կարող էի ծովի նման ես ծփալ,
Բայց հիմա լուռ, անհույս կանգնած եմ ափին,
Ծովն էլ ինձ հետ հստաչում է տխրագին,
Չես այցելում, ինձ պես նա էլ է մոռալ:

Ես ու ծովը՝ երկու լքված հոգիներ,
Մերթ փոթորկվում քո անադոսար վարմունքից,

Մերթ խաղաղված՝ լռիկ թախծում ենք նորից՝
Իրար խառնած երկու կարոտ, երկու սեր:

Լուս է ծովը, լիքն հուշերով մարգարտյա,
Իր գրկի մեջ գուցե քեզ է տեսնում նա
Եվ ժպտում է երազների մեջ վերին:

Ես էլ իր պես աղպես ժպտալ կուզեի,
Քամյանքի մեջ լինել իր պես լույսով լի
Եվ մարգարտով լցնել դատարկ իմ խեցին:

Եվ մարգարտով լցնել դատարկ իմ խեցին,
Երգով լցնել, քեզ մոտ չգալ ձեռնունայն,
Բայց ես լիքն եմ երազներով միմիայն,
Որ ամեն մի անձրևի հետ ծաղկեցին:

Մեր իմ, ծովը կապույտ-կապույտ է այնքան,
Կապույտ-կապույտ է երկինքը իր վրա,
Մեկ էլ կապույտ է երազն իմ յոթնաջան,
Քամոյի երեքն էլ անհուն են, անասհման:

Կարող էի երկնքի պես ես ժպտալ,
Ծովի նման կործք տալ, էլնել փրփրափայլ,
Թե տեսնեի քեզ իմ ճամփան պահելիս:

Ախ, փակեցիր ինձ երազի սահմանում,
Երա՞զը կա, վիշտս ինչքան էլ անհուն՝
Բայց քեզ էլի երախտապարտ է հոգիս:

Բայց քեզ էլի երախտապարտ է հոգիս
Մինչև անգամ իմ տանջանքի համար այս,
Իմ հուշերի, որ վառում են բյուր երազ,
Որ էլ լինեմ՝ սուկայծում են ճամփեքիս:

Ծովն եմ հիշում, ջրահարսիդ լող տալիս,
Ինձ եմ հիշում ծովի ճերմակ բոցերում,
Քեզնով դյուրոված՝ լողում էի քո հեռուն,
Խեղդվում էի, փրկեցիր ինձ սուզվելիս:

Բայց փրկեցիր, սիրո ծովը նետեցիր,
Խեղդվում եմ ես անհուսության մեջ անձիր,
Վրաս վշտի քանի ալիք փուլ եկած:

Ավաղ, գիտեմ, ինձ չես փրկի այս անգամ,
Սակայն բախտից էլի պիտի գոհ մնամ՝
Գեղեցկության անհունն զգալն ինձ մնաց:

Գեղեցկության անհունն զգալն ինձ մնաց,
Այն, որ ահեղ ալիքներին պլլվում,
Ճախրում էիր բոցափրփուր այս ծովում,
Ճախրող դու հուր՝ ջրերի մեջ չհանգած:

Խենթություն էր նետվել ծովը ամենի,
Բայց, դու գիտեմ, ուզում էիր այդ պահին

խիզախության ասանանները մարդկային,
Ոգու ուժը ճշտել շնչի տակ մահի:

Մարտահեղին ալիքը չէր կատաղի,
Մարտահեղին վախն էր, սովերն իսկ վախի,
Թե արթնանար քո խենթ սրտի մեջ հանկարծ:

Գիմով էի խիզախությամբ քո վերին,
Դեռ գիմով եմ շողքով քո լույս թևերի,
Այդ էլ քիչ չէ՝ քո շողք ու փայլն ինձ մնաց:

Այդ էլ քիչ չէ՝ քո շողք ու փայլն ինձ մնաց
Եվ բերկրանքն այս, որ ծովն անվախ նետվեցի՝
Ճրսպորված քո թովչանքով կանացի,
Քն խենթությամբ ինքս էլ հանկարծ խենթացած:

Եվ այդ պահից միշտ հանելույն մնաց մեծ,
Թե հրապրո, որից ծովն էր փոթորկվում,
Լուսն կործքո, ձայնիդ դողանջն անպատում
Մայր բնությունն ի՞նչ հանճարով ստեղծեց:

Եվ որտեղի՞ց քո աչքերի հուրն առավ,
Որ չգիտեմ ցուրտ հյուսիս են, թե հարավ,
Նույնիսկ ցրտով այրում են ինձ՝ նայողիս:

Որ գնում եմ՝ վառվում եմ ես դառնագին,
Քն շունչը կա, քո պատկերը իմ ճամփին,
Եվ իրերին՝ մայացքը քո՝ նայելիս:

Եվ իրերին՝ հայացքը քո՝ հայելիս,
Սեր իմ, միայն շողի հետ եմ բաղդատում,
Պարզևում ես խորհրդավոր քնքշություն
Ինչի հայում, ինչի որ ձեռք ես տալիս:

Ինձ եմ հայում հրանք քո ջիհջ աչքերով,
Լեզու առած շշուշում եմ իմ սրտին,
Որ դու հեռու, բայց փոված ես իմ չորս դին
Կանչող-դյութող, ինչպես ծովն այս անխողով:

Քո հայվածքի ցոլանքներն եմ հավաքում,
Եվ հյուսում քո լուսապսակն իմ հոգում
Անեղծելի, ինչպես լազուրը բարձրիկ:

Եվ դա իմն է, միայն իմը հավիտյան,
Բախտավոր եմ, որ քո ցոլքերն իմ մեջ կան,
Պահել եմ ես քո ձևերը սլացիկ:

Պահել եմ ես քո ձևերը սլացիկ,
Իսկ նա, ասա, ի՞նչ է պահում նա քեզնից,
Ինչպե՞ս հրան դու ժպտացիր, իմ անքիծ,
Նա վահեցավ անտվել ծովը փրփրալիք:

Նա ի՞նչ ունի, ի՞նչ էս հրա համար դո՛ւ՝
Սիրում աչքեր, սիրուն քերան, սիրուն քիթ,
Բայց նա չունի լուսապսակը դեմքիդ՝
Պանծս միակ, երանությունն իմ հոգու:

Հարուստ եմ ես, բայց նա ինձ չի նախանձում,
Քանզի լույս է ունեցվածքն իմ, չի տեսնում,
Ինչպե՞ս տեսնի և ի՞նչ տեսնի կույր սրտով:

Ինչպե՞ս զգա, որ տեսնում եմ լուսարբած
Քն սուրբ, քո նուրբ երազները թևաբաց,
Որ մտքիս մեջ հար ճախրում եմ հոգեթով:

Որ մտքիս մեջ հար ճախրում եմ հոգեթով
Քն վարսերը՝ տրված հողմին այն օրվա,
Մեկ է, թե՛ քեզ տեսնելուց մինչ հիմա
Ես նույն խեղճն եմ՝ դյութված սիրուդ հեքիաթով:

Մովն է ծփում՝ ամուսն արևը խորքում,
Սիրքները ցուցում են շողարձակ,
Մեր է արեմ ու շողերը հրա տաք
Ետքից ծովի դեմքն են լույսով ողողում:

Յուրքս՝ ափին, ինչքա՞ն աչքեր կան սիրուն,
Բայց ես անվերջ քոնի նմանն եմ փնտրում,
Մե՛ր, նմանը չկա, թեկուզ խաբուսիկ:

Որիչ աչքեր, ինչքան էլ ջիհջ ու պայծառ,
Ո՞նց բաղդատեմ աչքերիդ հետ լուսավառ,
Մարտ-մարտ, աստվածորեն գեղեցիկ:

Մաքուր-մաքուր, աստվածորեն գեղեցիկ
Ցուրք է փովել ալիքներից վետվետուն,
Լողում ես դու՝ հազար երազ քո սրտում
Եվ այս անգամ՝ ջրերի մեջ հանդարտիկ:

Ես քեզ տեսա... մի վայրկյան էր դյուրական,
Բայց տեսիլք էր, ցնդեց անհետ, էլ չկա,
Իմ կարոտն էր վառել ծովում արևկա
Աչքերիս դեմ քո պատկերը մի վայրկյան:

Սիրուն պատկեր, անվերջորեն թող տներ,
Թե այդ չեղավ՝ գեթ մի անգամ կրկնվեր,
Մի անգամ էլ ինձ պարզներ ծով բերկրանք:

Դեռ մտքիս մեջ քո տեսիլքը լուսածին՝
Ափին նստած՝ երգ հյուսեցի քո մասին,
Երգս դարձավ ճահճուտի ջուր փայլիդ տակ:

Երգս դարձավ ճահճուտի ջուր փայլիդ տակ,
Ոչ կարկաչում, ոչ էլ ծարավ է կոտրում,
Ո՞վ է եկել, ոսկին ո՞րտեղ է փնտրում,
Ախ, ասացեք՝ զո՞ւր է ամեն ճիգ ու ջանք:

Կարծում էին հարուստ երակ եմ ոսկու,
Սակայն, ինչպես ծանոթ հեքիաթն է ասում,

Ոսկու տեղակ մոխիր էր իմ կարասում,
Թե երբ փոխվեց՝ չեմ հասկանում, չեմ զգում:

Գուցե այնօր, երբ ես, սեր իմ, տեսա քեզ
Հողմի պահին կանգնած այնտեղ՝ ծայրին վես,
Օ, ի՞նչ սրամ էր՝ վեհացած քո տեսիլքով:

Երգիս ոսկին ինչպե՞ս մոխիր չդառնար,
Կորցրեցի ինչքան երգ ու ոսկի կար,
Բայց երգն ինչ է՝ հասկացա քո թովչանքով:

Բայց երգն ինչ է՝ հասկացա քո թովչանքով,
Մեկ էլ ծովի բռնկումով այն շքեղ,
Երբ մետվեցիր ալիքների մեջ անեղ,
Դու՝ բոցկտոր՝ լիքը ծովի հրաչրքով:

Սեր իմ, եթե չլինեիր այդպիսին,
Ինչո՞ւ լինեիր՝ գուցե թե ինձ սիրեիր,
Կամ մտասմատ՝ իմ տան ճամփան բռնեիր,
Երբ այդ դռներ սիրող առաջ փակվեին:

Ի՞նչ ասացի, մորացկա՞ն եմ, աստված իմ,
Մտտ եմ կարոտ, սեր իմ, խոսքիդ մտերիմ,
Բայց ինձ պետք չէ այդպիսի սերն անկրակ:

Դու ցած իջնես քո բարձունքից աստղային՝
Ինչպե՞ս զգամ տիեզերքը ես կրկին
Քն ու մայրի արծարծումով ներդաշնակ:

Քո հմայքի արծարծումով ներդաշնակ
Արծիվներ են ճախրում հոգու երկնքում,
Եվ մի արծիվ սավառնում է ու երգում,
Երգը նրա հնչում է միշտ կրծքիս տակ:

«Ռու ինձ տեսար՝ ցնցոտիներ ունեի,
Աղքատ էի, բայց ոչ իբրև մուրացկան
Ես ժայռեղեն կղզու նման անասան
Կանգնած էի հորձանքների մեջ մահի»:

Երգում է զիլ, ինձ է երգով ակնարկում,
Որ կանգնած եմ սիրո անվերջ հորձանքում
Ես ժայռեղեն կղզու նման անխորտակ:

Ոչ, չի լինի երբեք սիրո մուրացկան
Ով գերվել է թեկուզ մի պահ, մի վայրկյան
Քո հմայքի արծարծումով ներդաշնակ:

Քո հմայքի արծարծումով ներդաշնակ
Վառ աստղերն են հավերժորեն բոցկլտում,
Հանգավ, նաչիր, ասուպի գիծը օդում,
Ախ, ի՞նչ հավերժ, վախճան ունեն և նրանք:

Բայց ես էլի, ունայնության մեջ անգամ,
Խոնարհվում եմ գեղեցկության առաջ քո,
Տիեզերքն եմ լցնում սրտիս հառաչքով,
Երբ զգում եմ, որ քո սրտի մեջ չկամ:

Երբ որ դու կաս՝ ունայնությունն ինչ է որ,
Ես չեմ գողա, կեղևեմ հազար մահի դեմ,
Քն մտք սիրով և իմ երգով կհաղթեմ:

Բայց դու, սեր իմ, խեթ ես նայում ու խոժոռ,
Որ սրտիդ նետ՝ իմ ցնորքում լուսեղեն
Ես ուզեցի իմ երգերը բարախեն:

Ես ուզեցի իմ երգերը բարախեն
Սիրող սրտիդ զարկերի հետ միասին,
Կըրպի ի՞նչ սոնետներ քո մասին,
Թե այլերդ չընդհատեին սառնորեն:

Ողբերի մեջ սոնետներիս պսակի
Ինչպես միմա՝ դու կլիներ, պարզ է այդ,
Ես կլիներ ու տիեզերքն աստղազարդ,
Կըմբերցես դու, և քար սիրտդ կփափկի:

Սեփող, միմա քո ձեռքերով անտարբեր
Ռուբս ես նետել երգս՝ մահվան մատնելով,
Յուրս քամին է թերթում հողոտ մատներով:

Յեռմես կգա՞ այնպիսի օր, սեր իմ, սեր,
Որ դու ասես՝ երգով լեցուն ես եղել,
Ո՛հ ես ասեմ՝ փուշ չէր կցանքս հողեղեն:

Ու ես ասեմ՝ փուչ չէր կյանքս հողեղեն,
Ես էլ ահա հաղորդվեցի հրճվանքին,
Ինչ կար իմ մեջ՝ ես բաշխեցի հրճվագին,
Ով ստացավ՝ լիքն ու հարուստ է արդեն:

Ու հայացքս հստած բարձր կատարին՝
Մագլցում եմ իրավունքի լեռն ի վեր,
Որ տեղ հասնեմ, այդ խոսքն ասեմ անհամբեր
Վերելքիս մեջ ինձ քար նետող սրտերին:

Եվ քեզ ասեմ, իմ անհավատ, քեզ ասեմ,
Ամենից շատ կուզենայի ասել քեզ
Ու զղջումիդ խոսքը լսել վերջապես,

Հետո փուլ գալ զղջումի դեմ քո վսեմ:
Օ, իմ կյանքը վերջում շքեղ էր ինչքան,
Լիքն էր քաղցր ողկույզներով ճոխ աշնան:

Լիքն էր քաղցր ողկույզներով ճոխ աշնան
Իմ երազի թռչող գորգը՝ լայն բացված:
Որ այն հյուսեմ, քեզ նվիրեմ սիրարբած՝
Թելեր առա անձրևներից խնդաձայն:

Եվ իմ միտքը, որ տիեզերքն է չափում,
Նախշեր բերեց աստղաշխարհից անստվեր,

Նյութի խորքից պեղեցի նոր արևներ,
Որ գույները շողշողան նոր լույսերում:

Նվարեցի նոր դուրս թափվող ծիլերով
Կամրի գետը, որ տանում է մի դիակ,
Կրն է մանվան, որ նետեցի ոտքիդ տակ:

Մեռն է մեռել, ե՛ս մեռցրի իմ սիրով
Ու իմ թռչող գորգին նստած, գլխիս թագ՝
Սնցա ես էլ հաղթանակի կամարով:

Սնցա ես էլ հաղթանակի կամարով,
Բայց մտքիս մեջ, մի գերագույն տեսիլքում
Եվ ինձ թվաց՝ հոգիս լույս է ճառագում,
Անսպաս լիքն եմ մտքի փունջ-փունջ լույսերով:

Ու խորհեցի՝ այն է կյանքը վեհագույն,
Երբ չփվում ես դու վեհագույն մտքի հետ,
Որ պեղել եմ պրերն ընտիր, խորագետ,
Ոմտիր պահին, սուրբ վայրկյանին բռնկում:

Ինչքա՞ն շատ եմ, ինչքա՞ն տաք եմ պահերն այդ,
Բազմապիսի, բազմալեզու, բազմաշերտ,
Միշտ մտքացող, միշտ խորնացող ոգու երթ:

Ես սպրեցի նման մի պահ լուսացալտ,
Եսպր՝ հոգուս լուսե անձրև էր տեղում,
Փառք, փառք ոգուն արարչագործ ու բեղուն:

Փառք, փառք ոգուն արարչագործ ու բեղուն,
Որ դնում է քանդումի դեմ արարում,
Պատ ու պատնեշ քանդած էլնում, վարարում,
Իր քանդումն իսկ արարումի է հանգույն:

Մտքի հսկա ալիքները լեռնացած,
Սեր իմ, ցավից լվանում են իմ հոգին,
Գիտես ինչպե՞ս գերվում նրանց հմայքին,
Մոռանում են քո հմայքը ես հանկարծ:

Գեղեցիկ են նրանք էլ շատ, ինչպես դու,
Խորն են, խոհուն, խորախորհուրդ քեզ նման,
Բայց չեն խոցում, այլ պիտիում են միայն:

Լույս են տալիս գիշերիս մեջ ահարկու
Մեծ խոհերը, որ քո ցրտից ինձ խլում,
Հրի նման վառվում են իմ ուղեղում:

Հրի նման վառվում են իմ ուղեղում
Կարմիր-կարմիր կրակները սուրբ խոհի,
Բռնկվում են ինչպես կայծակ ամեհի
Նրանք երկրի ու երկնքի մեջտեղում:

Մտքի լիցքերն են կուտակվում աննկատ
Ու շողում է հանկարծ շանթը հայտնության,

Սեպերն մետո պիտի բարձր որոտան
Ու աշխարհին հայտնեն լուրը լուսացալստ:

Լուրի անձրև պիտի տեղա մտքերին,
Օ, ինչպե՞ս եմ այդ անձրևը ես սիրում,
Որ բջում է մտքից բոբբուն ու տանում:

Կամք են բերում ու թարմություն մի վերին,
Քիչգեղեցիկ են լցնում լույսով չմարող
Մեծ հայտնության խոհերը մեծ ու կարող:

Մեծ հայտնության խոհերը մեծ ու կարող
Քննողում էլ, գիտեմ, լույսեր են վառել,
Դու տեսնում ես գուցե ինձնից առավել
Սիրվել մտքի արևներում չմարող:

Դու չես փնտրում գրքերի մեջ մոռացում
(Ի՞նչ վիշտ ունես, որ նրանց մեջ թաղես խոր)
Քեզ դուրսում է ոգու ճախրանքը հզոր,
Որ թողնում է փուչն ու ճղճիմը ցածում:

Մեր իմ, էլի ուժիդ ասմանն ես ճշտում՝
Սեր անգամ էլ մտքի ծովը քեզ նետած,
Լող ես տալիս ալիքներում սրընթաց:

Միծաղում ես զաճաճների վրա դու,
Միծաղից տակ կուչ են զալիս մաղձով լի,
Փոքրամում են թզուկները ալվի:

Փոքրանում են թզուկները ավելի
Եվ ուզում են ցեխ շարտել անունիդ,
Այդպես է միշտ՝ երբ չեն հասնում անհունիդ,
Արձակում են անտը մանրիկ դավերի:

Ես կուրծքս բաց՝ գրոհի եմ անտվում գոռ՝
Մտքիս բոլոր գնդերն հանած արանց դեմ,
Որ պաշարված ամրոցների ազատեմ
Ու հաստատեմ քո իղձերը լուսավոր:

Դու չգիտես, թե ես ինչպես եմ կովում,
Ես այդ մասին քեզ չեմ ասում ոչ մի բառ,
Պետք է միայն կոխվ մղել քաջաբար:

Չարկում եմ ես, արանց դիերն են փովում,
Իրենց ուժին, երբ անշում են իմ զարկին,
Կասկածում են հսկաները իմ կողքին:

Կասկածում են հսկաները իմ կողքին,
Որ ինձ թողած՝ կրնորես մեկին իրենցից,
Չի ափոփում սակայն արանց խոսքը ինձ,
Սառն ես այնպես ու անտարբեր դու կրկին:

Հանդիպելիք գոնե մտքի ոլորտում
Ու տեսնելիք, որ ցածր չէ սլացքն իմ,
Համընթաց է քո արծվենի թռիչքին,
Մենք թև-թևի կթռչեինք երկնում նույն:

Ու մեր որդին գուցե պոետ կծնվեր,
Երազել եմ միշտ այդպիսի մի որդի,
Որի երգը գարնան գետի պես հորդի:

Այնպես հորդի, որ բազում լավ պոետներ
Նրա կողքին չհավատան ցավով լի,
Թե եղել են Ապոլլոնին սիրելի:

Թե եղել են Ապոլլոնին սիրելի,
Պիտի ձգտեմ միշտ էլ սիրվել արանցից,
Պետքները այդ լավ գիտեն, առանց ինձ
Եվ սրտն են իրենց սուրը ավելի:

Եվ սրտում էլ այդ ձգտումն է ալիքվում,
Ուռձանում է հույզի ալիքը անվերջ,
Ես գտալ եմ ուզում հիմա ցավիս մեջ,
Որ ափսի ճնշմանն է՛լ չեմ դիմանում:

Պիտի երգեմ, թող լինի երգս ազդու,
Աշխարհում մեկ անկաձև մահն է անում,
Սարսափի մեջ մարդկությունն է հատաչում:

Եվ թող ցրվի մութն իմ երգով անարկու,
Ի մե խնդություն, դարձնել աշխարհն արևկա,
Ընաց չի պամել բախտն ինձ համար նման պահ:

Բայց չի պահել բախտն ինձ համար նման պահ,
Որ ներշնչված՝ հավատայի, զգայի,
Թե արարիչ իմ ուժի դեմ հսկայի
Չարերն ահա խոնարհվել են աներկբա:

Այնինչ նրանք ի՞նչ հաճույքով դիվային
Հորինում են մահվան զենքեր նորանոր,
Կարծում են, թե այդպես դառնում են հզոր,
Ուժը դա է և այդ է պետք աշխարհին:

Որտե՞ղ գտնես, սեր իմ, ճարտար խոսք ու խելք,
Որ համոզես, թե դու ես ուժն իսկական,
Եվ աշխարհին պետք է ժպիտդ միայն:

Եվ ինձ է պետք, ամենից շատ ինձ է պետք,
Բայց իմ առաջ, ամենից պի՛նդ, իմ անգին,
Փակ է դուռդ ու փակ է սիրտդ կրկին:

Փակ է դուռդ ու փակ է սիրտդ կրկին,
Ո՞ւմ գանգատվես, որ սրտնեղած ինձ չասի,
Թե աշխարհը կրակի մեջ ու բոցի,
Սիրո դուռն է անվերջ բախում իմ հոգին:

Թե այս պահին դրվեց հիմքը մի շենքի,
Չուրվեց իսկույն այն կործանող և մի ռուսք,
Ամայացման ահն է դուսնն համառում,
Իսկ դու անվերջ, սեր իմ, իմ սեր, իմ անգին:

Մարդիկ, եթե սեր չի՛նի աշխարհում
Յուրս կփնի այս աշխարհը և ուրիշ,
Մի ունենա կյանքը լավի չափանիշ:

Անեն նեղվում սիրո լույս եմ նշմարում,
Ով չի ուզում՝ թող ինձ լքի, թող չգա:
Է՛ն, ի՞նչ արած, մե՛նակ կընկնես ես ճամփա:

Է՛ն, ի՞նչ արած, մե՛նակ կընկնես ես ճամփա,
Որ էլ գնամ՝ քեզնով լեցուն եմ էլի,
Քեզ եմ փնտրում, լույսի սկիզբ ըղձալի,
Որ իբրև սեր հայտնվում ես ինձ ահա:

Մտալ ամպ եմ, քո արևն է ներկում ինձ,
Երեզվում եմ քո շողերով խնդազին,
Որ էլ հասնեմ՝ կյանքիս բոլոր ճամփեքին
Ինձ լե՛ն ի վեր պիտի կանչես անհունից:

Բարձր է լեռը, անվերջ բարձր ու դժվար,
Թե ուզում ես ելնել նրա լանջն ի վեր՝
Պիտի մարգես մկանների զօր-գիշեր:

Սեր իմ, դու ինձ չես ուղեկցի սիրավառ,
Մի գուրգուրի ժպիտդ ինձ գեթ մի պահ,
Է՛ն, ի՞նչ արած մե՛նակ կընկնես ես ճամփա:

Էհ, ի՞նչ արած մենակ կրնկնես ես ճամփա
Մենակ՝ մարմնով, բայց կլինի հոգուս մեջ
Ողջ աշխարհը՝ իր քնքշությամբ լուսառեջ,
Ավաղ, նաև աղմուկներով անուպա:

Դու կլինես իմ հոգու մեջ, միշտ ինձ հետ,
Բայց ոչ մարմնով, ոչ էլ հոգով կլինես,
Քեզնից ես քեզ կգողանամ պարզապես,
Ինչ որ իմն է՝ քեզ իսկ չես տա ես հավետ:

Իմն է քո ողջ կախարդանքը, փայլք քո,
Իմ տեսածը, զգացածն իմ, ապրածն իմ,
Որոնց այնպես դարձել եմ ես մտերիմ:

Օ, ես պիտի այդքանից էլ լինեմ գոհ
Ու գոհ կրկնեմ քեզնից հեռու, բայց քեզ մոտ՝
Փառք ու օրհնանք ճամփաներին քարքարոտ:

Փառք ու օրհնանք ճամփաներին քարքարոտ,
Որ դժվար են, բայց տանում են լեռն ի վեր,
Սիրտս հազար տեղից խոցված կարեվեր՝
Դարձյալ հանում են բարձունքը արևոտ:

Ինչքան դժվար, քարքարոտ ու անընտել,
Այնքան լիքն են պայծառ լույսով հայտնության,
Այս ճամփան ցած, վեր է տանում այս ճամփան,
Բայց ես դեպի խորքը տանողն եմ ընտրել:

Պատասխանի խորքն եմ անվերջ մխրճվում,
Լույսի կրակն այնտեղ է լոկ թաքնված,
Երբ որ հասնեմ՝ պիտի ցուա լիարծարծ:

Հագրմության լույսն այնպես մոտ է ինձ թվում,
Ես ուր որ է կունենամ իմ գետերն հորդ,
Որ վառել եմ ծով հասնելու մի կարոտ:

Որ վառել եմ ծով հասնելու մի կարոտ,
Պիտի նաև ծով հասցնեն լույսերն ինձ,
Երբ տեղ հասնեմ, ծովը ելած ափերից՝
Ողջում կտա շատաշյուռով իր ծանոթ:

Մերս ծնվից հողմի պահին, ծովի մեջ,
Երբ, ջրամարս, ափ հանեցիր խեղդվողիս,
Սկս խեմք ծովից, թե՞ հեքիաթից է գալիս
Մերս դեպի հրեղեն ձին, հուրն անշեջ:

Ես տեսնում եմ ինչպես փրփուր ջրերից
ձրեղեն ձին ցուամում է իմ դիմաց,
Արդպես այժօր ծովից իմ սերն էլ ցուաց:

Մովից ծնվից, ծովի կապույտ բոցերից,
Մովն էլ պիտի կապույտ երազ աշխարհ տա,
Որտեղ պիտի սերս անուշ ծիծիս:

Որտեղ պիտի սերս անուշ ծփծփա
Այնտեղ հիմա լույս է իջել երկնքից,
Իմ սերն ու լույսն իրար հավերժ դաշնակից
Իրար գտել, չեն բաժանվել ոչ մի պահ:

Եվ անբաժան կաճեն այդպես լույսում հորդ
Մեր ծառերը՝ մեկը դու ես, մեկը ես,
Ասում են, թե հասկացել ես ու գիտես,
Որ թաքուն եմ ծառն իմ տնկել քոնի մոտ:

Հասկացել ես, չես զայրացել, իմ միակ,
Նույնիսկ շոյել ես ճյուղերը քնքշորեն,
Իրա՞վ է այդ, թե պարզապես՝ «ասում են»:

Պիտի ձգվեն երկինքն ի վեր կապուտակ,
Որ թաթախված կանգնեն լույսի մեջ վերին,
Փառք ու օրհնանք ծառի բարձր կատարին:

Փառք ու օրհնանք ծառի բարձր կատարին,
Ծառին իրեն, որ հողմն ինչքան էլ ահեղ՝
Պահպանում է իր մեջք-բունը փառահեղ,
Չի կոտրվում, շոկվում է վերստին:

Հողմը նրան արմատախիլ է անում,
Ու նա ընկած՝ ուզում է դեռ կանաչել,

Երե նույնիսկ մի արմատ է մնացել,
Որ կարող է ջուր հասցնել գեթ մի կուս:

Մեր ծառերը արմատախիլ չանես, հողմ,
Մեր երկու ծառն հասակ առնող կողք-կողքի,
Մեզն մեկը իմ նույսի նես թող ծաղկի:

Կտարածեն իրենց ճյուղերն ամեն կողմ,
Մրույթի նես ամուշ սոսափ, սեր ու կյանք,
Սերմաններից քյուր հազար փառք և օրհնանք,

Սերմաններից քյուր հազար փառք և օրհնանք:
Միշտ գետնի տակ, ի՞նչ է լույսը՝ չգիտեն,
Միշտ գետնի տակ, սոված ընկած դես ու դեն,
Միշտ արեի շողի կարոտ-գետնի տակ:

Ո՞ր գետնի տակ հազար քարի հանդիպած՝
Քար են ծակում, քար են մանրում անդադար,
Որ ինչ է թե սմունդ ճարեն մի պատուտ,
Համեփստ չունեն ու բուն չունեն, մի՛շտ հոգնած:

Յուրան է սեղմում՝ ստուած գետնի մեջ թաղված
Ոչ շարժվել են կարողանում, ոչ խոսել,
Մեթ, կփչեն ջունչը շուտով, ափսոս են:

Յետանք մահ, զարնանն ի՞նչ կյանք է, ասոված.
Մեթույց օրը սոված, ծարավ, բեռան տակ,
Խոթն են խրվել տառապանքի մեջ նրանք:

Խորն են խրվել տառապանքի մեջ նրանք՝
Արմատներն ու մազարմատներն անհամար,
Մի՞թե քիչ էր, որ ցավ ունեն բյուրհազար,
Հազար փորձանք տրվեց նաև ու վտանգ:

Օ, անկշտում, խենեշ միջատ, ի՞նչ արագ
Հողի տակով տեղից տեղ ես շտապում,
Որ հասնում ես՝ արմատներ ես հոշոտում,
Մահ ես սփռում ու կոտորած հողի տակ:

Իսկ արմատներն անգամ անկուր տանջանքում
Խորհում էին, որ ծառին պետք են իրենք,
Պիտի ապրեն, թեկուզ այսպես հոգնաբեկ:

Պիտի ապրեն ու հոգսերի մեջ անքուն
Ծարունակեն իրենց կոփվը լոին,
Որ հասցնեն հյութ ու ծիծաղ ճյուղերին:

Որ հասցնեն հյութ ու ծիծաղ ճյուղերին,
Կյանքում ինչքա՞ն արմատ-մարդ է տքնում լուռ,
Ախ, այստեղ էլ կա այն միջատը զարհուր,
Որ սարքում է կոտորածներ դիվաչին:

Մեր են սրա ատամները ավելի,
Լեռնափայլ, ջրածնափայլ ու ժահրոտ,
Լեռն շարժում մահ է կամ թե մահվան բոթ,
Կրակի ծառք մի կրծելով կավերի:

Ճեղ դու, միջատ, ճեղ դու, վիշապ դժնդակ,
Մեղ մարդն հրճվի, որ իր ծառն է բարձրանում,
Իր տանջանքով պտուղներն են քաղցրանում:

Մե՞ որ մեշտ չէ լինել արմատ հողի տակ
Ին տառապել, որ անարդար է այնքան,
Քաղցր պտուղն ինչքան էլ շատ, դառն էլ կա:

Քաղցր պտուղն ինչքան էլ շատ, դառն էլ կա,
Ճեղ ի՞նչ անի, եթե դառն է շատացել,
Մեր տեսնում է չարի աչքը մի սև ցել,
Մեղքը խկույմ սերմ է գցում մեղսական:

Մեր համեստը համց մեծարտո սերմնացան
Հույսն ներկերում շող է տալիս լույս ու սեր,
Եվ ես տեսա ոգորումի մեջ վստե՜
Ինչպես իմ մեջ լույսի ծիլերն արթնացան:

Ախ, իմ սերը ուրախ ծիլեր չարձակեց,
Քաղցր էր, սակայն, որ զգացի աշխարհում
Ինչպես բարու պտուղներն են քաղցրանում:

Եվ հպարտ եմ այս վեհացման համար մեծ,
Այս քաղցրության, ինչքան էլ որ լիովի
Բաժին ընկալ ինձ դառնահամն ավելի:

Բաժին ընկալ ինձ դառնահամն ավելի,
Բայց ես ահա ելած դառն բախտիս դեմ՝
Ամբողջ սրտով պիտի այդ բախտս օրհնեմ,
Որ քո շնչով, քո շողով է այսպես լի:

Քո անունն է իմ այս ցավից անբաժան,
Քո անունով դառն բախտս է քացրանում,
Ցավս լցվում է քաղցրությամբ քո անհուն,
Իմ վերքի մեջ զնգում մի երգ սրբազան:

Սեր իմ, եթե չունենայի վերքն այս տաք,
Պիտի խիճոյի ի՛նչ լինելը չզգայի,
Ապրեի լոկ ակնթարթով ներկայի:

Ու իմ լեզուն պիտի մնար քո դեմ փակ,
Չասեր՝ բախտն իմ ինչքան էլ դառն ու դաժան,
Փառք ինձ, կյանքից չդառնացա ես սակայն:

Փառք ինձ, կյանքից չդառնացա ես սակայն,
Ուրիշների խնդուն բախտով ապրեցի
Եվ քո բախտով, իմ հազարան սիրելի,
Եվ քո բախտով, որ իմ բախտն է անձնական:

Յեզ մեա ծառեր տնկեցի ես ներշնչված,
Թեև մտքով, դու ինձ կողքիդ չտեսար,
Մտքով քեզ մեա՝ մտքի երկնի մեջ անծայր
Հյացա ես քո թոփշքով սրբնթաց:

Սրբանաչացա, երբ ծովի մեջ մոլեգին
Օղբալվեցիր ալիքներից փրփրուն,
Ին փորձեցի քեզ հետ լողալ դեպ հեռուն:

Պարտվեցի ես, դու հաղթեցիր տարերքին,
Մեծ ոգին էր քեզ առաջնորդ, փառք նրան,
Յեզ էլ, իմ սեր, փառք ու օրհնանք հավիտյան:

Յեզ էլ, իմ սեր, փառք ու օրհնանք հավիտյան,
Թող ծնկի գա գոռոզ մահը քո դիմաց,
Բայց գուշակը, հետո բժիշկը փորձված...
Ձե, կատակ եմ նրանք արել անպայման:

Մեկ տարվա կյանք, արդեն հասել ես կեսին,
Չէ, սիրելիս, խենթացել եմ անկասկած
Նախ գուշակը, հետո բժիշկը փորձված
Կամ ցանկացել մի քիչ տանջել քո հոգին:

Նրանք այդ ի՞նչ ցավի անուն տվեցին,
Ասա, ես էլ մի ճար փնտրեմ անդադրում,
Կասկածներն են սիրոս անվերջ քրքրում:

Չէ, ծիծաղդ կարկաչում է վերստին,
Մի սուտ լուր էր, մշտադալար կյանքով լի
Լույս ես եղել, փառք, որ լույս ես դու էլի:

Լույս ես եղել, փառք, որ լույս ես դու էլի:
Չի հանգցնի մահը ջահդ հուրհրան,
Կճառագես գիշերներն էլ ինձ վրա,
Ինչպես մի նոր, ուրիշ սրև պաշտելի:

Էլ ինչու՞ է տանջում կասկածն ինձ այսպես,
Երբ դու ուրախ ծիծաղում ես լիաթոք,
Ախ, ես, գիտեմ, կյանք չես խնդրի ծնկաչոք,
Ծիծաղելով մահվան վրա՝ կմեռնես:

Չսուկացիր ծովի անկուշտ երախից,
Խիզախ ոգիդ մահից սուսջ համարձակ
Վաչելում էր խիզախության գինին բարկ:

Ի՞նչ հրաշք ես, բոցկլտուն կյանք անթախիծ,
Արարիչ լույս, պուփկում հոգու լիության,
Քո լույսով են ներկված երկու պատուհան:

Քո լույսով են ներկված երկու պատուհան,
Ու ներկված են երազներս քո լույսով,
Մի երազ էլ զարթնեց ահա՝ լի հույսով,
Որ մոտ չի գա լույսիդ ստվերն իսկ մահվան:

Ծաղրել ես ինձ, վրաս սատույց շարտել
Նրա՞ համար, որ իմ սերը հանգցնես,
Քո կորստի ցավը թեթև տանես ես,
Այնինչ դու էլ ինձ հետ շատ ես տատապել:

Դա էլ, սեր իմ, խիզախություն է իրավ,
Սիրել, տանջվել, քայց չտանջել ուրիշին,
Ծի՞շտ է, արդոք, սիրե՞լ ես ինձ, իմ անգին:

Թե՞ ինձ թվաց, ախր շատ եմ ես ծարավ
Ել ինձ համար տոն է, երբ իմ հանդիման
Քո լույսով են ներկված երկու պատուհան:

Քո լույսով են ներկված երկու պատուհան,
Ես կանգնում են ամեն գիշեր նրանց դեմ,
Որ քո լուսե տեսիլքի դեմ աղոթեմ,
Բայց բառերը ծուխ են դառնում ու չկան:

Իմ կարոտը բառեր չունի մեղսական,
Քո այդ երկու պատուհանի լույսի պես,
Քո այդ երկու պատուհանի լույսն է կեզ,
Արթուն է նա, երբ ես քնած եմ անգամ:

Պատուհանից դուրս չնայես դու հանկարծ
Ու չփշրես իմ երազը լուսալիր,
Թող ես հսկեմ քունդ մինչև լուսաբաց:

Ու բարկացած չմարես լույսը, սեր իմ,
Քո այդ երկու պատուհանի լույսերն հիր
Իմ աչքերն են՝ բացված մարդուն, իրերին:

Իմ աչքերն են՝ բացված մարդուն, իրերին,
Քո լույսերը որպես արև գիշերվա,
Նրանց միջով եմ ես տեսնում ինձ ահա,
Նրանց ցուրթից սուվեր թվում ինքս ինձ:

Դու, մաքրություն, ներիր, մթնում եմ մեկ-մեկ,
Չեմ սրբանում մտածելիս քո մասին,
Խեղձ եմ նայում թեկուզ քո մե՞ն մի մազին
Ես՝ տաճարիդ ուխտավորս հուսաբեկ:

Եթե գահդ երկնքի մեջ չլինի,
Սուտ կդառնան աստվածները և պատրանք,
Սրբությունը դեռ բողբոջում կմեռնի:

Քո աչքերը չեն նայում իմ աչքերին,
Բայց տանջում են մեղքիս համար ինձ նրանք,
Ես ուր գնամ՝ հետո է քո լույս հայելին:

Ես ուր գնամ հետո է քո լույս հայելին,
Սիրոս է բեկված քո աչքերի հայելում,
Ուրիշները կյանքի գինին վայելում,
Ես բարձում եմ նոր-նոր մեղքեր իմ սալին:

Ես փնտրում եմ մի դուռ մեղքից դուրս գալու,
Մխիթարվում հազիվ բացված ճեղքով իսկ,
Ուրիշները արդեն հարբել են նույնիսկ,
Ես իմ փոքրիկ շողքն եմ կում-կում վայելում:

Վախենում եմ լույսի այդ ցուլքն էլ կորչի,
Ես որք մնամ խավարի մեջ գիշերվա,
Մնամ կարոտ մի հոգեբույս ճաճանչի:

Մազցում եմ մտքով կատարը լեռան,
Բայց այնտեղ էլ նորից իմ մեղքն է լալիս՝
Իմ աչքերը, իմ արցունքները վրան:

Իմ աչքերը, իմ արցունքները վրան՝
Գալարվում է տիեզերքը ցավի մեջ,
Փշրվում են աստղաբույլերը անվերջ,
Որ նայում եմ՝ մոխրի բուք է անասհման:

Մոխիրներից արևներ են ծնվում արդ,
Որ վերստին մոխիր դառնան անընդմեջ,
Դողդում է տիեզերքը մահվան մեջ,
Կան և չկան կան թե չկան՝ մեկ է այդ:

Այս վիթխարի քառսի մեջ ես մի կես,
Ում ինչ պետքն է՝ կորչում եմ, թե հայտնվում
Կամ երազում լինել կողքիդ, միշտ քեզ հետ:

Հոգնում եմ ես այս մոխրի մեջ անհատնում,
Քեզ եմ գալիս, սակայն ինձ չես կանչում դու,
Ծշնջում ես, որ ես իզուր եմ հոգնում:

Ծշնջում ես, որ ես իզուր եմ հոգնում,
Հազար ձևով քո մերժումն ես կրկնում դու,
Բայց իրերի հորձանքի մեջ ահարկու
Միակ հաստատն աչքերն են քո անխուստում:

Նրանց ցուքում մոռանում եմ ինքս ինձ
Եվ իրերի հուքն ու մոխիրն անկաշուն,
Ապրում եմ ես, ինչ-որ ուրիշ ներկայում,
Որ մահ չկա և իրերն են անթախիծ:

Քո աչքերն են միակ հաստատն աշխարհում,
Երբ նայում ես, ողջը փոխվում է իսկույն,
Էլ ինձ հավերժն անհիմաստ բառ չի թվում:

Բայց պատրանք է, ինձ չես նայում սիրալատ,
Սիրտս էր ցավից այդ հրաշքը հորինում,
Երկինք տանող սանդուղք չկա ինձ համար:

Երկինք տանող սանդուղք չկա ինձ համար,
Որ բարձրանամ, հասնեմ աստղոտ աչքերիդ,
Մեկ էլ երգի ակունքներին մաքրաշիթ,
Որ ծարափս գոնե երգով մեղմանար:

Ասում ես, որ քնար ունեմ ես փայտե,
Մեղեդու տեղ չոր թխկթխկոց ես լսում,
Ծիշոտ որ, սեք իմ, մութն է այդպես հարվածում
Ու քո ձեռքով մեխում դազադս արդեն:

Այս իրերի հողմազալար քառսում
Մեկ էլ սիտի երգն ինձ կաշան սրբակեր,
Բայց պոետ չեմ, երբ որ դու ես այդ ասում:

Իմ թևերին խոսքդ ինչպես ծանր քար,
Ես՝ ուժասպառ, չեմ սավառնի երբեք վեր
Ու չեմ հասնի քո աչքերին փրկարար:

Ու չեմ հասնի քո աչքերին փրկարար,
Որոնք պիտի ինձ ուղեցուց լինեին,
Ես հաղթեի կասկածներն իմ ամեհի,
Ափ դուրս գալի հաստատաբայլ, հուսալիտ:

Լավ է լինել բրածեճ շուն աշխարհում,
Քան թե ծեծվել կասկածներից իր՝ ներքուստ,
Բաժին ընկավ վարթարագույնն ինձ վերուստ,
Էլ ես նույնիսկ ցնորքներ չեմ արարում:

Ու դառնացած գնում եմ ես աշխարհից,
Եվ ոչ մի երգ այս աշխարհին չթողած,
Որ մայր հողը իմ մահից ետ զգար ինձ:

Հոգիս ինչպե՞ս ցուրտ խոհերից չմրսեր,
Ո՞ւմ գանգատվեմ քեզնից բացի, իմ աստված,
Իմ մի աչքը երգ պիտ լիներ, մյուսը՝ սեր:

Իմ մի աչքը երգ պիտ լիներ, մյուսը՝ սեր,
Ու նայեի ես նրանցով աշխարհին,
Ինձ աշխարհն ու կյանքը հեքիասթ թվային,
Ու լինեի արքայազնը ես կրոսեր:

Ծովերի մեջ, ծովերից դեմ բոցկլտար
Հրեղեն ձիս՝ տեսիլքի պես հուրհրան,

Գիրկս առած երգի բլբուլն Հազարան՝
Քեզ մոտ գալի, որ նա երգեր քեզ համար:

Ու երգեի, ե՛ս երգեի քեզ համար,
Նսեմանար իմ դեմ բլբուլն Հազարան,
Ախ, ցնորքս ինչքան շատ է անհնար:

Երագում է միայն աղբատը ինձ պես,
Իմ աչքերում ոչ սեր, ոչ էլ երգեր կան,
Ես, ուրեմն, աչքեր չունեմ, կույր եմ ես:

Ես, ուրեմն, աչքեր չունեմ, կույր եմ ես,
Կարեկցում եմ ինձ թզուկները նույնիսկ,
Երբ նայում եմ կույր աչքերիս ու գույնիս,
Ծշնշում եմ թզուկերեն՝ ի՛նչ մեղք ես:

Նրանք՝ երգի թզուկները չգիտեն,
Որ կարող եմ քո մի խոսքով տառապել,
Քո մի խոսքով դարձնել աշխարհն առասպել,
Որ ծաղիկներն հավերժորեն կփթթեն:

Ցատկոտում եմ ճամփաներում աստղային,
Գոհ եմ այնպես, որ կարող եմ ցատկել դեռ,
Լվերի պես քնից հանել մուսային:

Ծնորհակալ եմ քեզանից, սեր իմ, սեր,
Որ քո խոսքով ես ինձ պոետ չեմ կարծում,
Փոսած ծառ եմ, չեմ տա երբեք ընձյուղներ:

Փռած ծառ եմ, չեմ տա երբեք ընծյուղներ,
Կկոտրվեմ՝ մի փոթորիկ էլ լինի,
Այսպես ջահել, դեռ չդարձած ծերունի,
Ես կփակեմ իմ աչքերը՝ մի ծով սեր:

Մի տնքոց էլ պակաս լինի, ինչ կա որ,
Աշխարհը չի սոքատանա դրանից,
Մի ծերուկ էլ պակաս լինի սեղանից,
Ում է նրա տնքտնքոցը հարկավոր:

Գոնե հիմա կասեն՝ ջահել մեռավ նա,
Կասեն՝ այնպես խորն էր սիրում մեկին՝ քե՛զ,
Եվ արտիդ մեջ գուցե մի լաց կարթնանա:

Թաց շիրմիս մոտ կկանգնես դու տրտմագին,
Ինձ ձայն կտաս, բայց դժվար թե ձայն լես,
Ոչինչն էմ ես, մեծ ոչինչը, մեծ փոշին:

Ոչինչն էմ ես, մեծ ոչինչը, մեծ փոշին,
Ինչպես մամոնտն՝ այս հողի տակ թաղված խոր,
Նրա նման սիրուս մեջ մեծ ու հզոր,
Թե՛ն սիրոս պարզված է սուր քո փշին:

Մամոնտն ընկավ, բայց գայլերը սպրեցին,
Որովհետև նեղ էն նրանք ու գայլ են
Ու մամոնտի ազնվությունը չունեն,
Որ ոչ մտով, միայն խոտով սնվեին:

Ոսկորներն են հիմա պեղում մամոնտի,
Կան, հավատա, մեր սարերում էլ նրանք,
Ոսկորներն իմ նրանց խառնեմ ես պիտի:

Գիտեմ, կասես, որ ցնորք է դա մի սին,
Ու կծաղրես, որ փառաստենչ եմ անհագ,
Մահվան մեջ էլ դարձյալ ձգտում եմ մեծին:

Մահվան մեջ էլ դարձյալ ձգտում եմ մեծին,
Կշանքում դու ինձ պիտի տայիր խորք ու փայլ,
Կարող էի ծովի նման ես ծփալ
Եվ մարգարտով լցնել դատարկ իմ խեցին:

Բայց քեզ էլի երախտապարտ է հոգիս,
Գեղեցկության անհունն զգալն ինձ մնաց,
Այդ էլ քիչ չէ՝ քո շողք ու փայլն ինձ մնաց,
Եվ իրերին՝ հայացքը քո՝ նայելիս:

Պահել եմ ես քո ձևերը սլացիկ,
Որ մտքիս մեջ հար ճախրում են հոգեթով,
Մաքուր—մաքուր, աստվածորեն գեղեցիկ:

Երգս դարձավ ճահճուտի ջուր փայլիդ տակ,
Բայց երգն ինչ է՝ հասկացա քո թուլչանքով,
Քո հմայքի արծարծումով ներդաշնակ:

Քո հմայքի արծարծումով ներդաշնակ:
Ես ուզեցի իմ երգերը բարախեն,
Ու ես ասեմ՝ փուչ չէր կյանքս հողեղեն,
Լիքն էր քաղցր ողկույզներով ճոխ աշնան:

Անցա ես էլ հաղթանակի կամարով,
Փառք, փառք ոգուն արարչագործ ու բեղուն,
Հրի անան վառվում են իմ ուղեղում
Մեծ հայտնության խոհերը մեծ ու կարող:

Փոքրանում են թզուկները ավելի,
Կասկածում են հսկաները իմ կողքին,
Թե եղել են Ապոլոնին սիրելի:

Բայց չի պահել բախտն ինձ համար անան պառ,
Փակ է դուռդ ու փակ է սիրտդ կրկին,
Էհ, ինչ արած, մեռակ կընկնեմ ես ճամփա:

Էհ, ինչ արած, մեռակ կընկնեմ ես ճամփա,
Փառք ու օրհնանք ճամփաներին քարքարոտ,
Տր վառել են ծով հասնելու մի կարոտ,
Որտեղ պիտի սերս անուշ ծփծփա:

Փառք ու օրհնանք ծառի բարձր կատարին,
Արմատներին բյուրհագար փառք և օրհնանք,
Խորն են խրվել տառապանքի մեջ նրանք,
Որ հասցնեն հյուսթ ու ծիծաղ ճյուղերին:

Քաղցր պտուղն ինչքան էլ շատ, դառն էլ կա,
Բաժին ընկավ ինձ դառնահամն ավելի,
Փառք ինձ, կյանքից չդառնացա ես սակայն:

Քեզ էլ, իմ սեր, փառք ու օրհնանք հավիտյան,
Լույս ես եղել, փառք որ լույս ես դու էլի,
Քո լույսով են ներկված երկու պատուհան:

Պ Ո Ե Մ Ն Ե Ր

ԿԱՐՈՏ

Լեռներ՝ իրար թիկնած....
 Այս աշխարհում սորում
 Մեկմեկու թիկնելու կարիքն ունեն
 Լեռներն անգամ:
 Ես լեռ չեմ,
 Ոչ էլ դու մման ես
 Ալեհեր Արարատին,
 Փուլ ես եկել, պապի, թույլ ուտերիս վրա:
 Ախ, հազիվ-հազ քայլող
 Մի ծերուկ ես միայն,
 Էլ չես ելնում մեր սեզ լեռներն ի վեր,
 Լեռ են թվում հիմա, շունչդ կտրող,
 Մեր այս քաղաքի տան սանդուղքները:
 Ելնում ես հնալով,
 Բայց հավատով մի տաք,
 Որ շունչ կտունես
 Մտերիմ հարկի տակ
 Եվ գոհ՝ փառք ես տալիս աստծուն քո,

Որ քեզ օր ծերության
 Չգցեց դռնեդուռ:
 Բացում ես ծորակը,
 Հիշում ես երևի,
 Որ ջուր էիր բերում գյուղի ծայրից,
 Եվ տնքում են նորից քո թևերը:
 Ինչքան լավ է այստեղ,
 Մի քայլ
 Եվ աղբյուր ես պաղ երկաթից հանում
 Ասես գավազանով կախարդական:
 Իսկական վայելք է,
 Հրաշք է իրական
 Ջրի կարկաշտունը չորս պատի մեջ:
 Եվ տաք է սենյակը:
 Սառչում էր ջուրն այնտեղ՝ գյուղի տանը,
 Սառչում էր թոնիրը դեռ լուսաբաց չեղած:
 Հիմա շոգ է նույնիսկ,
 Կուզես բաց-բաց քնիր՝
 Մրսել չկա,
 Թոնիրը ո՛ր,
 Ջեռուցիչն ո՛ր:
 Ու դնու մ ես ձեռքդ տաք երկաթի վրա.
 — Ուխտանձն, ոսկորներս տաքացան:
 Մինչ ցնծում ես,
 Ես խայթվածի մման վեր եմ թոչում,
 Համկանալով հանկարծ,
 Որ դու... մեր սարերին... չես կարոտում:
 Ծորակը բացելիս

Չես լսում կարկաշը
Մեր սարերի զուլալ աղբյուրների:
Ու թվում է հանկարծ, թե մքում են հիմա
Մեր սարերը:
Ինչպե՛ս կուգեճալի սեղմել կրծքիս նրանց
Ու տաքացնել:
— Ախ, պապ,
Գարուն բացվի,
Ես քո ձեռքից բռնեմ,
Մեծդոշ սարը տանեմ,
Բայց այս անգամ հոգսդ ստորոտին թողած:
Քեզ գնացքով տանեմ,
Մեքեճայով տանեմ,
Ձիով տանեմ,
Ձին վեր չբարձրանա՝
Իմ ուսերին տանեմ,
Որ չհոգնես,
Կանգնես՝ մեկ էլ նայես Մեծդոշ սարին,
Մեկ էլ տեսնես, ինչպես
Բույլ-բույլ կակաչներ են վառվում քարերի մեջ,
Ինչպես հովիվների արած կրակ
Ու ափսոսաս, որ դու է՛լ հովիվ չես այստեղ:
Մեկ էլ տեսնես, ինչպես
Իջնում է մշուշը կապո՛լտ-կապո՛լտ,
Սարը ծածկում,
Ասես երկինքն իր մով զգեստն է հագցնում
Եղբորը իր կրտսեր
Ու վերևից նայում աստղ-աչքերով,
Թե ինչպես է սազում:

Դու ննջո՞ւմ ես, պապի,
Ախ, արթնացիր, լսիր,
Մեծդոշ սարի լանջին, տաքացող հողի տակ,
Խլրտում են, զարթնում ծիլերն արդեն:
Երբ գարունը հորդի լիածիճաղ,
Մեր հսկային մեծկործք այցելենք, հա՛:
— Սարն էլ մի սար լինի,
Քար ու քուս,
Չէ, դու մեճակ գնա:
Եվ գնացի մեճակ:
Էլ արձակուրդ չունեմ.
Շոգ հովիսին
Ասֆարուն աչքերիս մեջ ծովակարոտ
Պիտի արտաշնչի դժոխքն իր գաղջ:
Ոչի՛նչ, կդիմանամ:
Ինձ զով կանեն դալար շիվերը այն,
Որ տնկեցի երեկ Մեծդոշ սարի լանջին:
Էլ չես ասի նրան քար ու քուս,
Որի՞չ ոչ մի լեզու այդ չի ասի:
Քո տանն էի քնում, քո խարխլված տանը,
Որի հատակն հողե պահում է դեռ
Բոքիկ նունահեւքերն իմ մանկության:
Ես այդ զգում էի
Ու ցնձում էր հոգիս,
Ինչքան էլ մարմինս ասում էր տնքոցով,
Որ հարևան տունը և՛ հյուրընկալ և՛ տաք
Դռները լայն բացած դեռ սպասում է ինձ:
Ցնձությունը հոգու, հասկացա ես,
Բարձր է լինում հաճախ և զորավոր

Յնծությունից մարմնի:

Մի ողջ ամիս տունդ առաստաղով մրոտ
Խոսեց, խոսեց, խոսեց իմ մանկության մասին:

Լայնացել են ճեղքերը պատերի,

Որոնցով մատները իր սպիտակ

Ներս էր խցկում բութը

Դեպի թոքերը քո:

Եվ դու հազում էիր:

— Էլի հազում՞ է շատ,

Հարցրին քո մասին:

— Հազում է, բայց շատ քիչ,

Ես ասացի նրանց,

Եվ նրանք ի սրտե ուրախացան.

— Փառք աստծո:

Փառք տվեցին և ինձ,

Որ հիշում եմ իրենց, չեմ մոռանում

Եվ թևերս քշտած՝ իրենց տղերքի հետ

Ծառ եմ տնկում:

Ես չասացի նրանց,

Որ դու մեր սարերին չես կարոտում:

Չուզեցի քո մասին մտածեիմ,

Որ ապրել ես գյուղում՝ չսիրելով գյուղը,

Հիմա էլ քաղաքում քաղաքը չես սիրում,

Այլ շեռուցիչը լոկ

Եվ ծորակը ջրի:

Ներիր, պապի, ներիր,

Որ ես ասում եմ այդ,

Բայց իմ մտքի մեջ եմ ասում միայն,

Դու չես լսում:

Դու ինձ գիժ կկոչես, երբ իմանաս ինչպես
Ես ձայն էի տալիս մեր սարերում,
Չայնս խլում էին Մեծդրոշն ու Թեղ սարը
Եվ սարերը բոլոր՝ թիկնած իրար
Ու սարեսար ուրախ արձագանքում էին:
Զնգում էր սարերում իմ շշուկը անգամ,
Իսկ այս ժխորի մեջ լոռում է գոռոցս
Հարչուր մետրի վրա:

Դու չգիտես ինչ է այդ զնգոցը ձայնի,

«Դե զնգոց է, էլի» նա քեզ համար,

Որ պետք կգա կորած ոչխարը փնտրելիս:

Մեծդրոշ սարի գլխից

Այնքան ձայն տվեցի, մինչև ձայնս խզվեց

Ու ընկա թուլացած, սակայն հպարտ,

Որ մեր սարը թեև փոքր է Էվերեստից,

Բայց Էվերեստն էլ գա՛

Չի խոնարհի նա իր գլուխը սեզ,

Չէ՞ սերում է ինքն էլ հսկաների ցեղից:

Չեմ հասկանում, պապի, երբ ասում ես մեկ-մեկ՝

Հող ու քար է նա լոկ,

Մարդ հող ու քարի՞ էլ կկարոտի,

Որտեղ ասես հող կա

Եվ քար՝ նույնպես:

Չէ, դու հենց այնպես ես ասում, պապի,

Ախր քո ասածը հասկանալու բան չէ:

Ես նայում եմ ահա կնճիռներիդ՝ խորունկ,

Ինձ թվում է նրանք ձորերն են մեր,

Երկար նայում եմ ես հողանման դեմքիդ,

Ինձ թվում է հաճկարծ,

Թե դու մի ծվեն ես մեր լեռներից պոկված,
Մի մարդակերպ բեկոր:
Եվ իսկապես,
Նրանցից առել ես միս, ոսկոր,
Չէ՞ որ հաց են տվել արտերը քեզ,
Որ կառչել են առես մեր սարերից,
Որ վայր չընկնեն:
Կառչիր դու էլ այդպես, չընկնես, պապի,
Ապրիր ինձնից էլ շատ,
Որ միշտ նայեմ դեմքիդ հողանման,
Մեր լեռների կարոտն առնեմ քեզնից:
Բայց դու... չես դիմանում,
Փակում ես աչքերդ,
Նրա համա՞ր արդյոք, որ չտեսնես
Անդունդն ինչքան է խոր...
Փառք աստծո, մահը խնայեց քեզ
Եվ այս անգամ անցավ կողքովդ նա,
Հնար տվեց, որ ես երկար-երկար
Խոսեմ քեզ հետ էլի
Ու հասկանամ մի պարզ, սովորական մի բան.
Մարդը իր ձեռքերին չի կարոտում,
Իր ոտքերին և կամ աչքերին իր,
Դրանք միշտ իրենն են
Ու միշտ իր հետ:
Այդպես սարերը մեր միշտ եղել են քեզ հետ,
Միշտ տեսել ես նրանց,
Չես կորցրել նրանց, որ կարոտես:
Մեր սարերից փչած սառը քամին

Իր մտրակն է զարկել ոսկորներիդ,
Նրանք մրսած են դեռ, չեն տաքացել:
Կարկուտն հարվածել է դաժան հոր պես
Գլխիդ, կրծքիդ, մեջքիդ,
Դեռ թվում է գլխիդ ուռուցքներ կան:
Ոռնացել է բուքը ճանապարհիդ,
Զարկել դեմքիդ՝ խեղդող ձյունափռոշով,
Ուզեցել քեզ թաղել,
Ու քեզ մինչև հիմա ծածկոցը ձյան
Թվում է սեփական պատանքդ ցուրտ:
Երազել ես դրախտ,
Չէ, մի տաքուկ անկյուն, որը չես ունեցել,
Որը հիմա ունես:
Երազել ես անվերջ
Ու կարոտել:
Իսկ ես
Մեր սարերը չունեմ հիմա,
Իսկ ես
Մեր սարերը կորցրել եմ:
Չյուն է գալիս հիմա մեր սարերում,
Սրսուռ, սպիտակ ձյուն,
Ախ, լինեի այնտեղ ու ոտքերով բոբիկ
Վազեի ձյան միջով:
Այդ ժամանակ միայն մեր սարերը բարձրիկ
Իմը կլինեին:
Նրանց գրկում կզգամ, որ շատ հարուստ եմ ես
Եվ աշխարհի անհոգ հարուստների նման
Ինձ կթվա,
Թե չեմ աղքատանա երբեք:

Փորձանոթին հսկված՝ մեկ էլ հանկարծ
Մոռանում եմ քիմիան,
Որ խոստանում է ինձ փառք ու անուն:
Ի՞նչ գործ ունեմ այստեղ,
Մեր սարերում հիմա բուքն է ոռնում գուցե
Անդուդներից մինչև գազաթները խրոխտ:
Իմ հոգու մեջ երբեք չի լռելու
Այդ սիմֆոնիան ճերմակ,
Որ մեր սարերն հիմա նվագում են
Եվ նվագեն պիտի ի պատիվ ինձ,
Երբ ինձ տեսնեն հեռվից:
Գնամ հարստանամ:
Բայց քաշում է փեշս անխիղճ քիմիան,
Սպասիր, ասում է, դու սիրում ես ինձ էլ,
Ու ես էլ, գիտես դու, սիրում եմ քեզ:
Չես հասկանա, պապի, եթե բացվեմ հիմա,
Քեզ այդ բոլորն ասեմ:
Ախրը շատ ես մրսած,
Դեռ դնում ես ձեռքդ շեռուցիչի վրա,
Յրտից նոր տուն քերված մարդու նման
Մրմնջում ես՝ ուխա՛ա՛յ,
Ուկորներս տաքացան:
Ես չեմ եղել կյանքում սրբերի ցուցակում,
Ծառ եմ իմ մեղքերը, և քավելու համար
Փռում եմ իմ սերը ոտքերիդ տակ,
Քայլիր, ցնձա,
Թե դու ցնձա՛ս՝ ես էլ կցնձամ, պապ,
Որ աշխարհում
Եթե սուրբ չեմ, գոնե մարդ եմ մի քիչ:

Ախ, դու երկար ապրիր:
Բայց դու ի՞նչ արեցիր, դա անելո՞ւ բան էր,
Ընդհատեցիր իմ այդ զգացումը... մեռար...
Քեզ զնացքով բերել,
Մեքենայով բերել
Ու տանում եմ ահա իմ ուսերի վրա:
Մեծորշ սարն է կանգնած,
Դու չես նայում նրան,
Բայց նա... նայում է քեզ:
Խառնում եմ քեզ նրան,
Մասնիկն էիր նրա՝ վերադարձի իրեն:
Ծառ եմ դարձել կարգին
Այն շիվերն իմ տնկած
Ու խշշում են վրադ:
Նրանք պիտի խշշան և իմ գերեզմանին:
Երբ ես մեռնեմ՝ թող ինձ թաղեն կողքիդ,
Մեծորշ սարի լանջին
(Եվ դա իմ կտակն է)
Հայացքի տակ նրա ինձ չեմ զգա մեռակ
Եվ սարսուռներ կանցնեն
Նրա սրտից իմին:
Իսկ քո սիրտը, պապի, ինչու՞ նույնը տենչաց.
Մահվան մահճում պատկած ինձ ասացիր,
Որ քեզ թաղեմ
Մեծորշ սարի լանջին,
Իմ տաք ձեռքով տնկած մի ծառի տակ:
Գուցե զարթնեց քո մեջ
Վերջին շնչում

Մեր սարերի կարտուն ամենագոր,
Քեզ ձգեցին նրանք:
Ես ինչքան եմ ուզում այդպես լինի,
Չէ, կասկած է միայն,
Թե՛ ուզեցիր լիներ ձեռքս վրադ
Քո մահից հետո էլ,
Իմ ձեռքի փոխարեն ծառն իմ ձեռքով տնկած
Պաշտպաներ քեզ
Եվ չթողներ մեռակ:

ՓՈՔՐ ՄՀԵՐԻ ՄՈՐՄՈՔԸ

I

Փակվեց Մհերը Ագուստաբարում,
Ու գլխի վրա ծանրացավ իշավ
Մի քարե երկինք, անասող երկինք,
Սասնա հովերը չեն շնկում այնտեղ,
Սասնա ջրերի կարկաչն անուշիկ
Չի հասնում հիմա ականջին նրա:
Մարդ չկա այնտեղ, ու ոչ էլ մարդու
Արդարություն կա կամ մարդու օրենք,
Մինչևիսկ չկա անարդարություն,
Խավար է միայն ու խավարի մեջ
Ինքն է մեն-մեռակ իր խոհերի հետ:
Դարեր են անցնում ու դարերի մեջ
Մահ չկա նույնիսկ, որ գա ու փրկի
Մոայլ Մհերին խոհերից մոայլ:
Էլ չի այցելում հովիվը նրան
Մեկ վարդևորին, մեկ համբարձմանն,
Մեռել է վաղուց, չէ՞ որ ոչ մեկը

Անեծք չէր արել, որ անմահ մնա
Ու տանջվի իր պես այս խավարի մէջ:
Այն ե՛րբ էր լսել նա մարդկային ձայն,
Երազի պես է հնչում ականջին,
Որ հովիվն ասաց, թե ե՛րբ ես, Մհեր,
Ե՛րբ ես դուրս գալու Ագոավաքարից:
Ինքն այն ժամանակ պտտասխան տվեց.
«Ես ո՞նց դուրս ելնեմ, հողն ինձ չի պահի,
Ղալբըցեր է շատ:
Աշխարհք ավերվի ու մեկ էլ շինվի,
Տորենն աշխարհքում լինի հանց մասոր,
Գարին՝ հանց ընկույզ,
Նոր էն ժամանակ կելնեմ էստեղեն»:
Դարեր են անցել, ոչ ոք չի գալիս,
Որ լուր տա իրեն, թե եղավ, Մհեր,
Ուզածդ եղավ, աչքդ լույս լինի:
Է, ցորենն ինչո՞ւ, ու՞մ ձեռքով պիտի
Լինի հանց մասոր, գարին՝ հանց ընկույզ,
Ինքն այստեղ պարսպ, ձեռքերը ծալած,
Ո՞վ պիտի քանդի աշխարհը մեղսոտ,
Նորմեկանց շինի:
Ռոբիշն այդ անի, ինքը տե՛ր դառնա,
Ինքը վայելի՞ շինածն ուրիշի,
Էլ ինչու՞ իրեն այսքան ուժ տրվեց,
Չէ, կելնի հիմա այս քարե բանտից,
Կելնի, բայց հողը շատ է ծերացել,
Հույս կա՞, որ բուժես՝ կջահելանա,
Ղալբըցել է շատ, հույս կա՞, որ ցանես,
Գեթ մի ծիլ կտա:

Ու երազ տեսավ Մհերը մոռյլ,
Տեսավ գարուն է բացվել աշխարհում,
Ծաղկած բալենու ճյուղեր են թոչում
Կոռուկների պես՝ երկնի կապույտով:
Ի՛նչ պայծառ, պայծառ ծաղկած ճյուղեր են,
Նրանց հետևից կոռուկների պես
Հրեշտակներ են շարեշար թոչում:
Չէ, խորհեց հսկան, իմ հույսն է էդպես,
Մեժ հույսն է ճախրում վեր աստևվորիս,
Դուրս կգամ աշխարհ, քանդեմ ու շինեմ
Ու աղերսագին խնդրեց աստծուց,
Որ փոխարինի անեծքն անեծքով,
Այս հավերժական խավար բանտի տեղ
Թույլ տա շրջելու վեր աստևվորիս,
Աշխարհում ինչքան ցավ ու հառաչ կա
Իր սիրտը լցվի, տանջի, քրքրի,
Այդ նոր անեծքից անբաժան մնա,
Միայն թե տեսնի արևը մեկ էլ,
Տառապի, հուսա, որ կա ցավին դեղ,
Լավ բան անելիս ցավն իր սրտի մէջ
Դույզն-ինչ մեղմանա:
Եվ լսեց աստված խնդիրքը նրա:

II

— Բարև, Մհեր, ասացի ես,
Բարով ելար դու լույս աշխարհ,
Հիմա պիտի ճամփա գնանք
Դեպի հարավ, դեպի հյուսիս,

Կամ արևելք, կամ արևմուտք:
Ինչ որ անես այս մեր դարում,
Իմ մտքի մեջ պիտի անես,
Իմ տեսածը պիտի տեսնես,
Իսկ իմ տեսածն այս է, Մհեր.
Քունկիկ Ջալալին զվարթ խրխնջաց,
Երբ որ դուրս ելաք Ագոավաքարից,
Նա էլ քեզ նման արևի կարոտ,
Արևից արբած՝ խաչուաց մի վայրկյան,
Հաջորդ վայրկյանին տխրեց քեզ նման,
Քեզ հասկանում էր, զգում քեզ քո ձին,
Ինչպես եղբայրն է եղբորն հասկանում:
Դու տխրել էիր հաջորդ վարկյանին,
Սիրող լցվում էր ցավով աշխարհի,
Հառաչանքները բոլոր կողմերից
Գալիս, ծով էին կապում սրտիդ մեջ:
Դու Սասուն էիր գնում ծանրացած:
Գարուն էր շուրջդ, արտույտներն ուրախ
Գեղգեղում էին արտերի վրա,
Որ արտեր չէին վաղուց, շատ վաղուց,
Այլ խամ ու խոպան, անմշակ, անտեր:
Ու՛ր են գնացել նրանց տերերը,
Մարդ չկա, հարցնես,
Իսկ արտույտները երգում են միայն՝
Անվերջ շատացող ցավիդ անտարբեր:
Ծատ մոտիկից է ցավն հոսում-լցվում
Սիրող կարեվեր:
Թփերն են պատմում, քարերն են պատմում
Այստեղ կատարված եղեռնի մասին,

Դու չես հասկանում, թե ինչ են պատմում,
Բայց սիրող ցավն է տանջում, բզկտում:
Դու ոսկորներ ես տեսնում մարդկային՝
Այստեղ ու այնտեղ թափված ցիրուցան,
Եվ աստվածային մի կամքով վերին
Անբառ լեզուն ես հասկանում հանկարծ
Թփի ու քարի:

Եթե լավ նայես, ասում են նրանք,
Չորացած արշան հետքեր կտեսնես
Մեր ծալքերի մեջ:

Կոտորած եղավ, կեռ յաթաղանը
Լողաց արշան մեջ ազգակիցներիդ:
Ու՛ր էիր, Մհեր, ամեն երեխա
Հարցնում է՝ ո՞ւր էր քո Թուր-կայծակին,
Ու՛ր էր Սասունցի Դավիթը այնժամ,
Նա, որ կարող էր բանակներ ջնջել,
Ինչու՞ չհասավ, ինչու՞ թույլ տվեց,
Որ յաթաղանը անպատիժ մորթեր:
Ու հասկանում է երեխան հանկարծ,
Որ մեռել Դավիթն ու հող էր դարձել,
Բայց ու՛ր էր նրա անմահ ժառանգը,
Ինչու՞ էր փակվել Ագոավաքարում:
Քար ու թուփն այդպես պատմում են, Մհեր,
Մորթոտվող մանկանց ճիչերը զարհուր
Սուր դաշույնի պես խրվում սրտիդ մեջ
Ու դուրս չեն գալիս,
Ինչքան փորձում ես քաշել ու հանել,
Ավելի խոր են խրվում ու մնում:
Ամեն ճիչ դարձած մի սուր նախատինք՝

Անվերջ կրկնում է՝ ու՞ր էիր, չեկար,
Մենք քեզ կանչեցինք, քեզ ու աստծուն,
Բայց դուք խուլ էիք, մեզ չլսեցիք:
Մորթվող հարսներն են նույնը հանկերգում,
Մորթվող ծերերը, ջահելներն անգեւն:
Ի՞նչ էիր անում քո մեհարանում,
Երբ աշխարհն այսքան չար էր ու դաժան:
Ու դու աղեկեզ խորհում ես քո մեջ,
Որ դավաճան ես եղել արյունիդ,
Հետո դառնում ես խորհում վերստին,
Որ աշխարհն էլի մեղքից է շինված,
Սուտ էր երագդ, այն, որ դու տեսար
Ծաղկած բալենու ճյուղերն են թռչում
Կռուկների պես՝ երկնի կապույտով:
Հույսի նշան չէր դա ամենևին,
Որ բարու սերմը դավաբանք հողում
Կարող է ծիլ տալ:
Քրոնկիկ Զալալին քեզ պես գլխիկոր
Քայլում է դանդաղ, ասես նոր թափված
Արյունի միջով:

III

Դեպի Սասուն է ճամփան երկարում,
Ծտապում էք դուք՝ քո նծույզն ու դու:
Մի փոքրիկ գետ է ելնում ձեր դիմաց,
Ափին երկու մարդ՝ կանգնած դեմուդեմ,
Դաշույններն հանել և այս է պիտի
Միմյանց խողխողեն:

Նայեցիր նրանց, և մի տնքոց էլ
Գումարվեց սրտիդ խուլ տնքոցներին.
— Կանգ առեք, մարդիկ, ձայն տվեցիր դու,
Է՞ր եք դուք ուզում իրար սպանել:
Մեկն ասաց՝ սա իմ ոսոխն է անհաշտ,
Ուզում եմ այստեղ իմ ծառը տնկել,
Այստեղ, լոկ այստեղ, բայց նա չի թողնում:
Մյուսն առարկեց՝ այստեղ, լոկ այստեղ
Իմ ծառը պիտի տնկեմ ես, հիմա,
Սա իմ պապերի ցույց տված տեղն է:
— Քո ծառն ասում եմ, ուրիշ տեղ տնկիր:
— Քո ծառը, տնկիր այդ ուրիշ տեղը,
Ու դաշույններն են՝ արյունի ծարավ
Կայծկլտում կրկին:
Նրանց պապերը հեկնց այստեղ մի օր
Ընկել են արևոտ այդ դաշույններից,
Նրանց հայրերը ընկել են նույնպես,
Եվ հերթը հիմա սրանց է հասել:
— Կանգ առեք, ծոեր,— կրկնեցիր դու,
Ահեղ էր ձայնդ, նրանք կանգ առան.
«Ծոեր» ասացիր, բայց նրանք բնավ
Սասնա ծոռ չէին,
Չարակամ էին ու նաև խաբված
Իրենց արյան հետ վաղուց խառնված
Օձային թույնի չար շշուկներից,
Որ լոկ մի բան էր ասում՝ սպանիր,
Խլիր, քոնն արա կյանքում ամեն ինչ:
Ծառ տնկելու պես լավ բան չի լինի,
Տնկեք ձեր ծառեր, ասացիր նրանց,

Էս տեղ, որ կասեք թող իր տեղ մնա,
Ձեր ծառեր տնկեք, մեկդ քիչ վերև,
Մեկդ քիչ ներքև:

Տնկեցի՞ք, պրծա՞ք:

Դե հիմի տնկեք իմ խաթեր համար,
Երկուսով տնկեք Էստեղ էլ Էս ծառ,
Թող լինի դա ծառ ձեր բարիշուքյան,
Էս տեղի համար շատ-շատ եք կովել,
Անխելքներ, վա՞տ է, որ համ ապրեք դուք,
Համ էլ երեք ծառ կանաչե՞ն, բերք տան
Էս ջրի ափին:

Ազդու էր ձայնդ, խոսքդ՝ բանական,
Անասցին նրանք քո արդար խոսքին
Եվ էլ առավել քո ձայնին ազդու
Եվ սկսեցին երրորդն էլ տնկել՝
Ծառը հաշտության:

Ձէ, բարու սերմը կարող է ծիլ տալ,
Հողը այնքան էլ շատ չի դալբըցել,
Կյանքում էլ, ինչպես երազում բարի,
Ծաղկած բալենու ճյուղեր են թռչում
Կոունկների պես՝ երկնի կապույտով:

IV

Արևն է խայտում Սասնա սարերում,
Բոցկլտում ծփում կանաչի վրա
Եվ Սասնա բերդի,
Բերդ չէ, մի սար է վես սարի վրա,
Ժեռ-ժեռ քարեր են, քարեր են հսկա

Մեկմեկու վրա ուռք դրած ելած

Գիրկը երկնքի:

Առավոտ ծեփին կանգնեց բերդի դեմ
Քունկիկ Չարալին:

Վար իջավ Մհերն ու հազար տարվա
Անհուն կարոտով պատերն համբուրեց:
Ախ, ո՞ր եք, ախ, ո՞ր, Սասնա տան ջոջեր,
Ու՞ր ես, Սանասար, ու՞ր ես, Բաղդասար,
Ու՞ր ես, պապ Մհեր, ու՞ր ես հայր Դավիթ,
Ձեր ձայները կան, դուք չկաք, չկա՞ք:

Սյս պատերի մեջ առաջվա նման
Ձեր անուշ ձայնից կյանքն է արթնանում,
Հոգով լսում է Մհերն ու խորհում,
Որ մարդուց միայն մի հուշ է մնում:
Ռոնաձայներ են ասես թե լսվում,
Դավիթ՞ն է գալիս՝ որսը շարակած,
Ձէ, աչդ Մհերին մի վայրկյան թվաց,
Միրտն ախրը շատ էր ուզում, փափագում,
Որ այդպես լինի:

Դավիթը հիմա իր Խանդութի հետ
Խաղաղ հանգչում է այնտեղ, պատի տակ:
Ու գնաց Մհերն աղոթք անելու,
Բեկված ընկնելու հոր ու մոր շիրմին:

Տեսավ քար չկա,

Տարել են, ավաղ, շիրմաքարերը:

Բերդի քարերը ջոջ-ջոջ ապստած
Չեն կարողացել թե տեղից շարժեն,
Ծիրմաքարերը ջարդել են, տարել:
Գնաց Մհերը ու երկու ջոջ քար

Գլորեց, բերեց հոր ու մոր շիրմին,
Երկու հսկա ժայռ դարձրեց շիրմաքար,
Դե գան թող հիմա գողանան տանեն:
Փուլ եկավ հետո հոր ու մոր շիրմին,
Փուլ եկավ, լացեց Մհերը անմահ.
— Հերիկ, ի՞նչ անեմ, մերիկ, ի՞նչ անեմ,
Աստված ինձ մահ էլ չի տա, թե մեռնեմ,
Մեռնեմ ու պրծնեմ ցավերի ձեռքից.
Երկնքից կուգան, գետնքից կուգան
Կլցվեն իմ մեջ աշխարհքի ցավեր,
Իմ սիրտ կպած է ցավի ակունքին,
Թեթև հոգոց մի հեկնց հառաչ դարձավ
Իմ արտիկ կերի,
Էս ինչքան արցունք մարդոց արտում կա,
Դեռ էնոնց արտից աչքին չի հասել,
Իմ սիրտ կծորի էդ աղի արցունք:
Ասի չմնամ քարի մեջ բանոված,
Իմ խնդիրք լսեց քարերս աստված,
Փոխեց հին անեծք էս նոր անեծքով,
Հերիկ, ի՞նչ անեմ, մերիկ, ի՞նչ անեմ,
Ախր նոր անեծք ծանր է առավել,
Էլ չեմ դիմանա:
Մի լավ բան արի, իմ ցավ մեղմացավ,
Բայց հիմի նորեն էն ցավն է սաստիկ:
Մի դույլ ջուր պակսեց ջրհորի միջեն,
Վռագ երկու դույլ տեղն ավելացավ,
Էս աշխարքի ցավ հա՛ կավելանա:
Հերիկ, խորհուրդ տուր, մերիկ, խորհուրդ տուր,
Ես ինչպե՞ս ապրեմ

Ու գերեզմանից Դավթի ձայնն հնչեց.
— Գնա քարակիկ մեր աղբյուրի մոտ:
— Աղբյուրն ի՞նչ ասի, էն լեզու չունի:
— Գնա քարակիկ մեր աղբյուրի մոտ,—
Նույնն ասաց մայրը:
— Էն ջուր է, դուք մարդ, ձեր խորհուրդ ասեք,
Խնդրեց Մհերը,
Բայց ինչքան խնդրեց և ինչքան լացեց,
Էլ գերեզմանից ոչ մի ձայն չեկավ:

V

Ջուրն է բխում քուլա-քուլա,
Հողի տակից ելնում է դուրս,
Ելնում հոսում է սարն ի վար՝
Կարկաչելով անուշ-անուշ:
Որոնեցին ակն աղբյուրի
Ու շինեցին նրան մոտիկ
Իրենց անսոթ բերդը Սասնա
Սանասարն ու Բաղդասարը,
Հիմա բերդի պատկերն իր մեջ՝
Ջուրն է հոսում գլոր-գլոր
Ու քարեքար թռչկոտելով,
Թռչկոտելով, փրփուր տալով:
Սասնա քաղցրիկ սրևի տակ
Ցուցլալով, ալիք-ալիք
Ջուրն է վազում մանկան նման,
Կտրում գետը ձորով հոսող,
Հսկա գետը կիսում թափով,

Զարնվում է դեմի ափին
Ու նոր հոսում այդ գետի հետ:
Այս, աստված իմ, ջինջ է ինչքան,
Մաքո՛ւր-մաքո՛ւր:
Խորհեց Մհերն ափին կանգնած.
«Իմ հեր, իմ մեր ինձ ասացին,
Որ բարակիկ էս ջրի պես
Անցնեմ ճամփես»:

VI

Իջավ Մհերը Սասնա սարերից,
Գնաց շրջելու աշխարհե-աշխարհ,
Իր ճամփին տեսավ այն երկու մարդկանց,
Որ դաշույն էին հանել իրար դեմ,
Ոչ ոք չէր ուզում իր ծառը տնկել
Իր ասած տեղից վերև կամ ներքև:
Բայց ի՞նչ տեսնել էր, նրանք չկային,
Էլ չէին ապրում, դիակներ էին,
Պառկած էին լուռ, մեկի դաշույնը
Մյուսի սրտում: Զարդոտված, ընկած
Դիակներ էին ծառերը նույնպես:
Անգթորեն էր ջարդված ավելի
Ծառը հաշտության:
Կեղտոտ արյունը մոլեգնել կրկին,
Հաղթել էր, ավա՛ղ, այդ մարդկանց սրտում,
Բայց ախր պիտի մաքուրը հաղթեր,
Տեսավ Մհերը, թե ինչպես քիչ-քիչ
Զուլավվում էին աչքերն այդ մարդկանց:

Սուտ էր, երկնքով՝ կոռնկների պես՝
Ծաղկած բալենու ճյուղեր չթռան:
— Էնոնք իմ ահու տնկին էս ծառեր,
Իմ ճշմարիտ խոսք չհասավ էնոնց,
Սուտ ու նեղություն քանց հեղեղ՝ շատ էր:
Ասաց ու քեց Մհերը իր ձին,
Որտեղ էլ եղավ՝ ցավը իր հետ էր,
Գիշեր ու ցերեկ նա դադար չուներ,
Ցավն սուվերի պես հետապնդում էր,
Սակայն սուվեր չէր, թե սուվեր լիներ,
Գեթ գիշերները հանգիստ կթողներ:
«Արդար գործ անեմ՝ իմ ցավ մեղմանա,
Կամուրջ կապելուց լավ բան, չէ՛, չկա,
Իմ կամուրջ կապեմ էս գետի վրա»:
Ու ծառեր քերեց մոտիկ անտառից
Ու քարեր քերեց՝ մեկ-մեկ քարափներ,
Ու կամուրջ կապեց Մհերը բարի,
Ուզեց անց կենալ կամրջով հսկա,
Բայց դեմը կտրեց մի լիսպոր մարդուկ.
— Սա իմ կամուրջն է, փող տուր՝ նոր անցի:
Գազազեց Մհերն ու գետը նետեց
Ծակաչք մարդուկին,
Բայց խիղճը տանջեց, ուզեց դուրս հանի
Ծակաչքին ջրից,
Տեսավ խրվել է գետի հունի մեջ,
Մեռել է, չկա,
Թափով էր նրան գետը շարտել:
«Մեռավ՝ թող մեռնի, էն չար էր, ազահ»,
Խորհեց Մհերը ու բռնեց ճամփան:

Գհուլ-գունայի ձայն եկաւ հեռովից,
Չայնը մոտեցաւ, հարսնառ էր գալիս,
Հարսանքավորներն ուրախ, ցնծալից
Հարս էին տանում մի հուրի-փերի
«Աշխարհքում շատ կա ուրախություն էլ,
Քե՛ք, ուրախություն ինչ է, չե՛մ գիտեր,
Իմ սիրտ չե՛ն լցվի,
Մե՛նակ արցունք է ինձ ընկել բաժին»:
Ու գինի խնդրեց վշտահար հսկան,
Որ անհուն ցավը գինու մեջ խեղդի,
Բայց ինչքան խմեց՝
Սրտի մեջ ցավերն այնքան շատացան.
— Էս ի՞նչ կար խառնած ձեր էս գինու մեջ,
Ես ոչ խնդումով, ցավով հարբեցի:
Ասին՝ ոչ մի բան, մաքուր է գինին:
Եվ գինին իրոք մաքուր էր, զուլալ,
Ու պարում էին այդ գինուց հարբած
Ուրախ, երջանիկ ահել ու շահել:
Լոկ հարսն էր տխուր,
Մի սև մորմոք էր՝
Ճերմակ, թրթռուն հարսնաբողի տակ.
Այս, զոռով էին նրան հարս տանում,
Մհերը, սակայն, ինչպե՛ս իմանար:
Իմանար՝ հարսին կիւլեր իսկույն,
Քուրկիկ Ջալալու գավալկին առած
Կտանէր նրան իր սիրածի մոտ,
Որ ուրախությունն իսկական լինէր,
Եվ հազար ցավով լեցուն իր սրտից

Գոնէ մի կաթիլ արցունք պակասեր:
Կասեր՝ ծաղկի թող ու բար տա ձեր սեր,
Եվ ուրիշ քնքուշ խոսքեր կասեր նա,
Զարթնել բուրում էր իր էություն մեջ
Սիրո մի քաղցր, հազարամյա հուշ...
Իրիկվա դեմ էր, ձիուց իջաւ ցած,
Կամեցաւ գետում լողանալ մի քիչ,
Զրի մեջ տեսաւ մի լուսե աղջիկ:
— Աման, անծանոթ, կանչեց աղջիկը,
Ես մորե մերկ եմ, ինձ մոտիկ չգաս,
Էն ժայռի հետև կանգնիր մի պուճուր,
Իմ շորեր հագնեմ:
Կանգնեց Մհերը «Էն ժայռի հետև»,
Սպասեց մինչև աղջիկն հագնվեց,
Բայց կույտի տակ նա մերկ էր կրկին,
Յուրումն լույս էր նա կույտի տակ,
Որ թե՛ն հագաւ խավարի սև շոր,
Բայց էլի մերկ էր, ոնց լույսը՝ մթնում:
Նայում էր դժուրված, հետո չիմացաւ
Ձեռքն ինչպես գցեց մեջքից աղջկա,
Բայց սրա ապտակն իջաւ երեսին,
Խոռվեց քաջը, ձին հեծաւ ահա,
Կանգնեց ձիու դեմ գեղունի՛ն փափկած.
— Կտրի՛ն, մի գնա, կտրի՛ն, մի գնա,
Այսք էս քեզ եմ էսքան սպասել:
Իմ հասակ, նայիր, մեկ բարդի ծառ է,
Քո հասակի հետ իսկը հարմար է:
Մեր երկրում ինչքան ազուպ տղերք կան
Եկան չափվեցին, իմ կեսից եղան,

Ես ո՞նց լինեի մի թզուկի կին:
Իմ մեր ինձ ծնեց, սիրուն աչք տվեց,
Դեռ սիրունից էլ մի բան առավել,
Իմ մեր ինձ ծնեց, ճերմակ մաշկ տվեց,
Դեռ ճերմակից էլ մի բան առավել.
Եվ բարձր հասակ իմ մեր ինձ տվեց,
Ավա՛ղ, բարձրից էլ մի բան առավել:
Հիսի որ եկար, էլ ախ չեմ աճի,
Գտանք մենք իրար՝ դու ինձ ու ես քեզ:
Հիշեց Մհերը, բայց չբաղցրացավ
Սիրտը գեթ մի պահ այդ քաղցր հուշից,
Լոկ դառնությունն էր բաժինը նրա
Ու նա դառնացած խորհեց հոգու մեջ,
Որ հող է դարձել աղջիկն այդ վաղուց,
Ավաղ, չգիտի ո՞ր սև քարի տակ,
Որ գնա փուլ գա նրա սուրբ շիրմին:

VII

Սասունն հեռու է, Սասունը՝ երազ,
Ինչպես օրերն այն հեռու մանկություն,
Որ հազար տարի առաջ են եղել:
Ավաղ, ետդարձի ճանապարհ չկա,
Ինչպես որ մեկ էլ չի կարող գնալ
Ու փակվել մթին Ագռավաքարում,
Սասնա քաջերը, որ խոսք ասացին,
Էլ հետ չեն վերցնում:
Գնում է, գնում Մհերը խոժոռ

Ճամփեքով օտար,
Ու մեկ էլ ահա մի դաշտ է փովում
Նրա միշտ տխուր հայացքի դիմաց:
Մի տրակտոր է այստեղ հոճորում
Ու շարում թեթև ակոս ակոսի,
Երգը խառնելով խուլ հոճոյունին՝
Իր վար ու ցանքն է մեկն այստեղ անում:
Էս ի՞նչ հրաշք է, Մհերն է ապշում,
Բա եզներն ու՞ր են,
Ոչ եզ կա, ոչ լուծ, ոչ էլ մաճկալ կա,
Չէ, մաճկալն ահա նստած քշում է
Էս արմանք-գարմանք երկաթե բանը:
Մարդն է ստեղծել, փառք նրա խելքին,
Ուրեմն անցած էս հազար տարում
Մարդն աստծու հետ մրցման է ելել:
Մհերը աչքով տեսած չլինեք,
Չէ, չէր հավատա,
Ուրեմն գուր չէր տեսել երազում՝
Ծաղկած բալենու ճյուղեր են թռչում
Կոունկների պես՝ երկնի կապույտով:
Աշխարհում ցավը պիտի պակասի,
Մարդը քարի է:
— Հեյ, ու՞ր ես գնում, դարձիր, մի գնա,
Զայն տվեց, ասաց զուրթանի մարդը,
Այդ ճամփով գնաս՝ վատ բան կտեսնես,
Կոիվ է, կոիվ այնտեղ, առջևում:
Թեկուզ հսկա ես, հսկա է ձիդ էլ,
Քեզ էլ, ձիուդ էլ մեկտեղ կսպանեն:
— Չէ, կերթամ, ասաց Մհերը նրան,

Մարդը բարի է:

Ասաց ու քշեց Բունկիկ Զալալին,

Միշտ որ՝ Մասնա ծոռ:

Մի ժամվա ճամփա հազիվ գնացած՝

Մի թռչուն տեսավ (ինքնաթիռ էր այն)

Նման թևավոր դեռ տեսած չկար,

Թռչուն՞ է, թե՞ դև երկնքով կերթա:

Նրանից պոկվեց, ցած ընկավ մի բան

(Մհերին թվաց թռչունը ծրտեց)

Մի պայթյուն լավեց, զարհուրելի ձայն,

Եվ մի հսկա շենք փոշու մեջ կորավ,

Երբ ցնդեց փոշին, էլ շենքը չկար:

Աստծու ստեղծած թռչուններից չէր,

Մա՞րդն է ստեղծել, թե՞ դևը նրան:

Կանգնեց Մհերը միտքը շվարած,

Միրտը՝ ցավի մեջ:

Ախ, այդ ումբն ի՞նչ, երբ կան աշխարհում

Աշխարհը բանդող ումբեր ուրիշ

Զգիտի Մհերն ու թող չիմանա,

Որ մեր աշխարհը այնպես հիվանդ է

Ատոմի ցավով,

Եվ տնքոցները հիվանդ աշխարհի

Իր սիրտն են լցվում:

Զգիտի միտքը, բայց սիրտը գիտի

Ու դրանից է, որ աշխարհի հետ

Տնքում է անվերջ:

VIII

Մնաս, բարով, ազնիվ Մհեր,

Քո ցավի հետ մնաս բարով,

Քեզ բերեցի մինչև այստեղ

Ես՝ մերօրյա մի վիպասաց,

Սակայն մինչև բաժանվելս

Ես իմ մտքով պիտի հյուսեմ

Դեռ մի դրվագ վեհիդ մասին:

Իմ մտքի մեջ ահա նորից

Գնում ես դու ճամփով դժվար

Ու մտնում ես մի առավոտ

Ցնցոտիներ հազած մի գյուղ:

— Է՞ր եք, մարդիկ, էսքան աղքատ:

— Բա ի՞նչ անենք, ասում են քեզ,

Խոռվել է աստված մեզնից,

Երկրի տերն էլ չի հիշում մեզ:

Չորս կողմ, նայիր, քար ու քուս,

Մեր արտերում բան չի բուսնում:

Գյուղին մոտիկ մի մեծ գետ կա,

Բայց ի՞նչ օգուտ, հնար չունենք,

Թե էդ գետից մի ճյուղ բերենք,

Ջրենք մեր հույս արտն ու այգին:

Ջրի ճամփին վիշապի պես

Այ, էն չորուկ սարն է կանգնել

— Ելեք, քլունգ ու բահ առեք,

Թե դուք մի բահ հող կփորեք,

Ես՝ հազարը:

Ծողշողացին քլունգ ու բահ,

Մի շարաթից մի օր պակաս՝
 Զորք հոսեց գլոր-գլոր
 Դեպի ծարավ արտն ու աչգին:
 Ու նման էր ջուրն այն ջրին,
 Որ հայրենի քո Սասունում
 Սասնա բերդի մոտից իջնում,
 Հարկում ձորով հոսող գետին,
 Կտրում հասնում դեմի ափին
 Ու գետի հետ հոսում գնում
 Մաքո՛ւր-մաքո՛ւր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Բանաստեղծություններ

Քաղում ցեծում եմ	3
Մաշտոցյան բալլադ	4
Բանաստեղծի ծնունդը	6
Երկու ամս	7
Տիգրան Պետրոսյան	9
Գազանանոցում	10
Չեմ հավատում բարիներին	11
Զյուն է գալիս	11
Հայրական	12
Որդիական	17

Սոնետներ

Ծնորհակալ եմ քեզանից	22
Որ քո խոսքով	23
Փռած ծառ եմ	24
Կկոտրվեմ	25
Աչապես ջահել	25
Ես կփակեմ	26
Մի տնքոց էլ պակաս լինի,	27
Աշխարհը չի աղքատանա	27
Մի ծերուկ	28
Ո՛ւմ է նրա տնքտնքոցը հարկավոր	29
Գոնե հիմա կասեմ	29
Կասեմ՝ այնպես խորն էր սիրում	30
Եվ արտիդ մեջ	31
Թաց շիրմիս մոտ	32
Ինձ ձայն կոսա	32
Ոչինչն էմ ես	33
Ինչպես մամոնսն այն	34
Նրա նման	35
Թեև սիրոս պարզված է	36
Մամոնսն ընկալ	36

Որովհետև Անկո եւ Արամբ	37
Ու մամուկի ազնկությունը չունեն	38
Որ ոչ մտով, միայն խոտով	38
Ոսկորներն են հիմա պեղում	39
Կան, հավատա	40
Ոսկորներն իմ Արանց խառնեն	40
Գիտեմ, կասես	41
Ու կծաղրես	42
Մահվան մեջ էլ	42
Կլանքում դու ինձ	44
Կարող էի	44
Եվ մարգարտով լցնել	45
Բայց քեզ էի	46
Գեղեցկության անհունն զգայն ինձ մնաց	46
Այդ էլ քիչ չէ	47
Եվ իրերին, հայացքը քո	48
Պահել էմ ես	48
Որ մտքիս մեջ	49
Մաքուր-մաքուր	50
Երգս դարձաւ	50
Բայց երգն ինչ է	51
Քն հմայքի արծարծումով	52
Ես ուզեցի	53
Ու ես ասեմ	54
Լիքն է քաղցր-ողկույզներով	54
Անցա ես էլ	55
Փառք, փառք ոգուն	56
Հրի Աման	56
Մեծ հայտնության	57
Փոքրանում են	58
Կասկածում են	58
Թե եղել են	59
Բայց չի պահել	60
Փակ է դուդ	60
Էդ, ի՞նչ արած	62
Փառք ու օրհնանք	62

Որ վառել են	63
Որտեղ պիտի	64
Փառք ու օրհնանք	64
Արմատներին բլուրհազար փառք	65
Խորն են խրվել	66
Որ հասցնեն հյութ ու ծծում	67
Քաղցր պտուղն ինչքան էլ շատ	67
Բաժին ընկավ ինձ	68
Փառք ինձ	69
Քեզ էլ, իմ սեր	69
Լույս ես եղել	70
Քո լույսով են Աերկված	71
Քո լույսով են Աերկված	72
Իմ աչքերն են	72
Ես ուր գնամ	73
Իմ աչքերը	74
Ծընշում ես	74
Երկինք տանող	75
Ու չեմ հասնի	76
Իս մի աչքը	76
Ես, ուրեմն	77
Փռած ծառ եմ	78
Ոչինչն եմ ես	78
Մահվան մեջ էլ	79
Անցա ես էլ	80
Էն, ինչ արած	80
Պոետներ	81
Կարոտ	82
Փոքր Մհերի մորմոքը	93

Վաչագան Լևոնի Վարդանյան

Կ Ա Ր Ո Տ Ն Ե Ր

Բանաստեղծություններ, սոնետներ, պոեմներ

Вартанян Вачаган Левонович

Т О С К И

Стихи, сонеты, поэмы

(На армянском языке)

Издательство «Советакан грох»

Ереван, 1987

Խմբագիր՝ Է. Գ. Մարգարյան

Նկարիչ՝ Կ. Ս. Մկրտչյան

Գեղ. խմբագիր՝ Գ. Խ. Գլուխաճիւրյան

Տեխ. խմբագիր Մ. Է. Ճանճապետյան

Վերատպող արագրիչ՝ Է. Գ. Գողոպյան

ИБ 5598

Հանձնված է շարվածքի 23. 04 87 թ.: Ստորագրված է տպագրության
16. 07. 87 թ.: ՎՖ 01673: Ֆորմատ 70×108^{1/32}: Թուղթ՝ տպագր. № 2:
Տառատեսակ՝ «Նորք»: Տպագրություն՝ բարձր: 5,07 պլավ. տպ. մամ.,
5,23 պլավ. ներկ. թերթ 3,75 հրատ. մամ.: Տպարանակ 3000: Պատվեր
1767: Գինը՝ 40 կոպ.:

«Սովետական գրող» հրատարակչություն, Երևան—9, Տեղյան 91:

Издательство «Советакан грох», Ереван-9, ул. Теряна, 91.

Հայհրատպետկոմ «Պարբերական» արտադրատարածական միա-
վորման Արտաշատի շրջհրատի տպարան:

Армагоскомиздат типография Арташатского райиздата издательско-
производственного объединения «Периодика».